Արտակ Վ. Գնունի
պատմ.գիտ. թեկնածու

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔԱՂԱՔԱԳՈՅԱՑՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Վաղ բրոնզի ուրբանիզմի սոցիո-մշակութաբանական վերլուծության փորձ*

Մուտք

Քաղաքը մարդկային քաղաքակրթության բնորոշ գծերից մեկն է. որոշ իմաստով համաշխարհային պատմությունը ծավալվում էր քաղաքների ֆոնին: Պատահական չէ գերմանացի անվանի մշակութաբան Օ. Շպենգլերի դիտարկումը. «Համաշխարհային պատմությունը քաղաքաբնակ մարդու պատմությունն է[1]»:

Քաղաքների առաջացման հետ կապված հարցերը գիտաճանաչողական մեծ կարևորություն են ստանում մանավանդ մարդկության պատմության բեկումնային պահերից մեկի՝ նախնադարյան հասարակության քայքայման և դասակարգային հասարակության ձևավորման դարաշրջանի ուսումնասիրության համատեքստում: Ուրբանիզմը՝ քաղաքագոյացումը, հանդիսանում է քաղաքակրթության ձևավորման հիմնական վկայություններից մեկը[2]: Հետևաբար քաղաքագոյացման պատմության ուսումնասիրությունը և վաղագույն քաղաքային միավորների հատկանիշների վերհանումը կարող է մեծապես օժանդակել հասարակության նյութական, քաղաքական, սոցիո-նորմատիվ և հոգևոր մշակույթի զարգացման բազմաթիվ հարցերի լուսաբանմանը:

Վաղագույն քաղաքային միավորների առաջացումը դարձել է բազմաթիվ հետազոտողների ուսումնասիրության առարկա: Այս հարցին հանգամանալից ուսումնասիրություններ են նվիրել Գ. Չայլդը, Ջ. Ռիքվերտը, Ռ. Մակ Աղամսը, Ա. Օպենհայմը, Վ. Մասոնը, Յու. Անդրեևը, Կ. Քուշնարյովան, Գ. Արեշյանը, Հ. Սիմոնյանը և ուրիշներ:

Մասնագիտական գրականության մեջ օգտագործվում են **նախաքաղաք (պրոտոքաղաք), վաղ քաղաք, հին քաղաք, կվազիքաղաք** (բառացի՝ **կեղծ քաղաք**) անվանումները: Եվրոպական գրականության մեջ հանդիպում են «**town**» և «**city**» բնորոշումները, իսկ ամրացված բնակավայրերի վերաբերյալ հազվադեպ չեն քաղաքատեղի՝ «городище, hillfort» անվանումները:

* Հոդվածն ընդունվել է տպագրության 10.10.2010:

1 О. Шпенглер, Закат Европы. М., 1999, т. 2, с. 113.

2 Ուրբանիզմ՝ լատիներեն Urbis՝ քաղաք բառից: Այս բառով ընդունված է բնորոշել քաղաքների առաջացման և զարգացման գործընթացները:

Հայկական լեռնաշխարհում և հարակից շրջաններում մ.թ.ա. IV հազ. երկրորդ կեսին և III հազ առաջին կեսին ծավալված վաղ ուրբանիզացիոն գործընթացները գտնվում էին շենգավիթյան մշակույթի տարածման տիրույթում: Աշխարհագրորեն այն ներառում էր Հյուսիսային Կովկասից՝ Սիրիա և Պաղեստին, Հյուսիս-Արևմտյան Իրանից՝ Տավրոսյան լեռներ ընդգրկող տարածաշրջանը՝ զբաղեցնելով մոտ 1,5 մլն քառ. կմ: Շենգավիթյան մշակույթը բնորոշվում էր մի շարք ընդհանրություններով ինչպես արհեստագործական արտադրությունում, այնպես էլ ճարտարապետության և հավատալիքների մեջ: Դա չէր կարող չնպաստել առանձին համայնքների միջև կապերի աշխուժացմանը և որպես արդյունք՝ մեկ ընդհանուր պատմամշակութային մարզի ձևավորմանը: Բացի այդ, պետք է հաշվի առնել, որ շենգավիթյան մշակույթի գոյության ընթացքում նրա կրողները բազմիցս փոխառնչություններ մեջ են մտել մերձավորարևելյան քաղաքակրթությունների հետ: Նշված հանգամանքները նպաստավոր պայմաններ ստեղծեցին սոցիալական գործընթացների հետագա զարգացման և նախնադարյան հասարակության քայքայման համար: Նախնադարյան հասարակության քայքայման փուլում առաջացող կարևորագույն սոցիո-մշակութային երևույթներից էր ուրբանիզմը:

1. Ուրբանիզմին նպաստող աշխարհագրական գործոնները

Մ.թ.ա. IV-III հազ. Հայկական լեռնաշխարհը գտնվում էր համեմատաբար խոնավ ժամանակաշրջանի ավարտական փուլում, քանի որ մ.թ.ա. VII-II հազարամյակները համապատասխանում էին հոլոցենի եղանակային օպտիմումին[3]: Հնէակենդանաբանական և հնէաբուսաբանական նյութի քննությունը թույլ է տալիս ենթադրել, որ Հայկական լեռնաշխարհը վաղ բրոնզի ժամանակաշրջանում գերազանցապես ծածկված էր անտառատափաստաններով զուգորդվող անտառներով: Դրա մասին են վկայում մ.թ.ա. IV-II հազ. հուշարձաններից հայտնաբերված ազնիվ եղջերուի (Շենգավիթ՝ Արարատյան դաշտ, Էլառ, Գառնի (Կոտայք), Շիրակավան (Շիրակ), Սոս Հոյուք (Էրզրումի շրջակայք), Քոռուջութեփե (Եփրատի վերին ավազան), այծյամի (Շենգավիթ, Էլառ, Գառնի, Շիրակավան, Ջաղացատեղ, Շահլամա II (Տավուշ), վարազի (Սևան, Ցամաքաբերդ (Գեղարքունիք), Ջաղացատեղ (Շահլամա II), զուբրի (Սևան, Ցամաքաբերդ) ոսկորները: Հարկ է նշել, որ այնպիսի կենդանիներ, ինչպես ազնիվ եղջերուն և զուբրը, բնակվելով անտառներում, միաժամանակ խուսափում են հոծ անտառապատ տարածքներից[4]: Անտառային ծածկույթի առկայության մասին են խոսում նաև անտառային

---

3 Տես П. И. Долуханов. Аридная зона Старого Света в позднем плейстоцене и голоцене. – "Известия Всесоэзного географического общества." т. 117, вып. 1, Л., 1985. с. 16.

4 Տես С. Межлумян. Палеофауна эпох энеолита, бронзы и железа на терротории Армении. Е., 1972, с. 166; С. К. Даль. Животный мир Армянской ССР. Е., 1954, с. 55, 147, 155-156; Красная книга Армянской ССР (животные). Е., 1987, с. 22, 28-29; Красная книга РСФСР (животные). М., 1988, с. 34, 111; Л. А. Петросян. Раскопки памятников Кети и Воскеаска. Е., 1989, с. 87; С. А. Есаян, Древняя культура племен Северо-Восточной Армении. Е., 1979, с.168-170; A. Sagona. M. Ertem, C. Sagona, S. Howells. Excavations at Sos Hojuk 1996. Third Preliminary Report. Anatolica N XXIII, Leiden 1997, p. 199; J. Boessneck, A. von Drich. Trieknochenfunde vom Korucutepe bei Elazig in Ostananatolies. "Korucutepe1". Amsterdam-Oxford-New-York 1970, p. 111; M. van Zeist, J A. H. Baker-Neers Prehistoric and early historic plant husbandry in the Anatolian plain. South-Eastern Turkey. - "Kəroçutepe I", p. 129, 211-219.

բացատներում աճող երեքնուկի հետքերը Քոռուջութեփեում և Թեփեջիկում (Արածանիի ստորին հոսանք, Ոսկեբեր հովիտ): Անտառապատ էր նաև Թռեղքի տարածաշրջանը[5]: Միևնույն ժամանակ պեղումներից հայտնաբերվել են նաև որոշ տափաստանային կենդանիների ոսկորներ՝ ջեյրան (Շիրակավան), բու, ոսկե արծիվ, բադ (Սոս Հույուք): Անտառային և տափաստանային կենդանիների ոսկորներ գտնվել են նաև Շորա քարանձավում (Գետաբակ): Անտառազուրկ էին Ջավախքը (անտառները տարածվում էին միայն գետահովիտներում) և Միլի-Ղարաբաղյան տափաստանը: Արսլանթեփեից (Եփրատի վերին ավազան) հայտնաբերված կռունկի, սագի և ագռավի ոսկորները վկայում են, որ այստեղ գետահովիտները անտառազուրկ էին[6]: Բացի այդ, էնեոլիթից վաղ բրոնզին անցման փուլում որոշ տարածաշրջաններում արձանագրվել է տափաստանների տարածքների ընդլայնում: Այսպես, Արսլանթեփեում հայտնաբերված են վիթի (էնեոլիթյան հորիզոններում՝ 1 միավոր, վաղ բրոնզեդարյան՝ 11) և բորենու (էնեոլիթյան հորիզոններում բացակայում են) ոսկորներ[7]:

Այսպիսով, ուսումնասիրվող ժամանակաշրջանում շենգավիթյան մշակույթի տիրույթի մեծ մասը ծածկված էր անտառներով, թեպետ այն հոծ անտառապատ չէր, ինչի մասին վկայում են տարածաշրջանում տափաստանային բուսականության և կենդանական աշխարհի մնացորդների գտածոները: Անտառանյութը հանդիսանում էր շինանյութ և առևտրի առարկա, ինչը խթանում էր հասարակության զարգացումն ընդհանրապես և ուրբանիզացիոն գործընթացները մասնավորապես[8]: Իհարկե, հոծ անտառապատ տարածքների առկայությունը կարող էր խոչընդոտել համայնքների միջև բնականոն կապերի զարգացմանը[9]: Սակայն, պետք է նշել, որ բնակավայրերի խմբերը տեղադրված էին հոծ անտառածածկույթից զուրկ շրջաններում: Քաղաքագոյացման համար նպաստավոր պայմաններ էր ստեղծում նաև տարածաշրջանի հանքային պաշարներով հարուստ լինելու իրողությունը:

2. Շրջակա միջավայրի ընկալումը և լանդշաֆտի օգտագործումը

Աշխարհագրական դիրքով էր պայմանավորված նաև բնակավայրերի տեղաբաշխումը որոշակի ամփոփ տարածքում: Պետք է հաշվի առնել այն փաստը, որ դեռևս նախապետական հասարակությունում բնակավայրերը շրջակա միջավայ-

5 Տե՛ս Ч. П. Джанелидзе, Палеогеография Грузии в голоцене. Тбилиси, 1980, с. 118; Красная Книга Армянской СССР (растения) М., 1988, էջ 122; J. Boessneck, A. von Drich. Trieknochenfunde vom Korucutepe bei Elazig in Ostananatolies, նշվ. աշխ., էջ 111, M. van Zeist, J A. H. Baker-Neers, նշվ. աշխ., էջ 129, 211-219:

6 Տե՛ս М. М. Мансуров, Т. С. Айдемиров, Разведочный шурф в пещере Шора. - "Археологические Открытия в 1983 г" (далее- АО). М., 1984 с. 488-489; Л. А. Петросян, նշվ. աշխ., էջ 87, Ч. П. Джанелидзе, նշվ. աշխ., էջ 93, 120, Г. Н. Лисицина, Л. В. Прищепенко, Палеоботанические находки Кавказа и Ближнего Востока. М., 1977, с. 65-66; Красная Книга Армянской СССР (растения), с. 252; Красная книга РСФСР с. 236; Г. Франк, П. Хамельт, Г.-А. Кетц, Г. Нато, Х. Рейнботе. Плоды Земли. М., 1979 с. 22; A. Sagona. M. Ertem, C. Sagona, S. S. Howells, նշվ. աշխ., էջ 199, J. Boessneck, A. von Drich, նշվ. աշխ., էջ 111:

7 Տե՛ս S. Bokoni. Hunting in Arslantepe. - "Between the rivers and over the mountains". Roma, 1993 p. 343, 345-346.

8 Տե՛ս M. C. Brandt. Nippur: Building at environmental model. - "Journal of Near Eastern Studies", այսուհետև JNES, vol. 49, N 1, Chicago 1990, p. 67.

9 Տե՛ս R. Walon, S. Kantman. Early Bronze Age development in the Keban reservoir East-Central Turkey. - "Current Anthropology". vol. X, N1, Glasgow 1969, p. 130.

րի վրա դրոշմում էին իրենց գործունեության յուրահատուկ «կնիքը»[10]: Այսպես՝ վաղ բրոնզեդարյան ժամանակաշրջանում ձևավորվում է խոշոր բնակավայրերի շուրջ համեմատաբար փոքր բնակավայրերի խմբավորման սկզբունքը[11]: Փաստորեն ստեղծվում է բնակավայրերի մի քանի աստիճանի հիերարխիա, ինչը հանդիսանում է ուրբանիզացված հասարակության կարևոր հատկանիշներից մեկը[12]: Օրինակ՝ Արարատյան հարթավայրում, Էջմիածին քաղաքից ոչ հեռու, Աղաբլուր և Շրեշ բլուր բնակավայրերը վաղ բրոնզի դարում հանդիսացել են Մոխրաբլուր բնակավայրի համապատասխան հորիզոնի սեգմենտավորման (տրոհման) արդյունքը[13]: Բացի այդ, Էջմիածին քաղաքում և նրա շրջակայքում, հետևաբար՝ Մոխրաբլուր բնակավայրի անմիջական հարևանությամբ, վաղ բրոնզեդարյան նյութեր են հայտնաբերվել մի շարք վայրերից՝ Սբ. Հռիփսիմե տաճարի մերձակայքից, Մայր Տաճարի տարածքից և մերձակա պուրակից (Էջմիածնի պատմաազգագրական թանգարան՝ այսուհետև ԷՊԱԹ ինվ. համ. 2219-2221), Շահումյանից (Էջմիածնի շրջան)՝ ուրարտական ջրանցքի տարածքից, Էջմիածնի նոր ջրատարի տարածքից (ԷՊԱԹ ինվ. համ. 3870, 4250, 4551-4563), Թեղուտից (Էջմիածնի շրջան)՝ ենեոլիթյան հուշարձանի և միջին-ուշ բրոնզեդարյան դամբարանադաշտի տարածք (ԷՊԱԹ ինվ. համ. 46-51, 2087, 2218, 2225), Ծաղկունքից (Էջմիածնի շրջան) (ԷՊԱԹ ինվ. համ. 2083), Զվարթնոցից և այլն[14]: Հնագետ Է. Խանզադյանը վկայում է, որ Արևիկ (Արմավիրի շրջան) բնակավայրի անմիջական հարևանությամբ տեղադրված է եղել յոթը արբանյակ-բնակավայր, իսկ Զրահովտի (Մասիսի շրջան)՝ վեց[15]: Էլառ հուշարձանախմբում՝ Դարանի ամրոցի անմիջական հարևանությամբ, գտնվում էին Գյոթուլկա, Նախրատափ, Աղամալյանների կալ, Փոշտի դրշ արբանյակ բնակավայրերը: Նմանատիպ երևույթ է դիտարկվել նաև Շիրակում, որտեղ Սղնախներ բնակավայրի անմիջական հարևանությամբ գտնվում էին Կրաքարի սար և Գորներ բնակավայրերը[16]: Տաշիր-Ձորագետում՝ Թագավորանիստի բնակատեղիի անմիջական հարևանությամբ, հաստատագրված են Յաքաղ և Մաշտոցի բլուր համեմատաբար փոքր բնակավայրերը, իսկ Տաշիրի Նորաշեն գյուղի մոտակայքում առկա էր փոքր բնակավայրերի ցանց[17]:

---

10 Տե՛ս S. Stoddart. Urbanization and state formation. - "Companion Encyclopedia of Archaeology". London- New-York. 1999 p. 930.

11 Տե՛ս Հ. Սիմոնյան, Հայկական լեռնաշխարհի հնագույն քաղաքակրթությունների և պետական կազմավորումների առաջացման խնդրի շուրջ (ըստ հնագիտական տվյալների), «Հայոց հին պատմության հիմնահարցեր», Եր., 2003, էջ 9:

12 Տե՛ս E. B. Banning. Spatial perspectives on Early Urban development. In: Aspects of Urbanism in Antiquity from Mesopotamia to Crete. Sheffield 1997 p. 18-19: Իսկ Գ. Արեշյանը դիտարկում է երեք մակարդակի բնակավայրեր՝ Դվինի կամ Մեծամորի մակարդակի գերկենտրոններ, Մոխրաբլուրի նման տարածաշրջանային կենտրոններ և Աղաբլուրի և Շրեշ բլուրի նման բնակավայրեր, որոնք գտնվում են ավելի խոշոր բնակավայրերի ազդեցության գոտում: Տե՛ս G. Areshian Early Bronze Age settlements in the Ararat Plain and its vicinity. Archaologische Mitteilungen aus Iran und Turan Band 37, Berlin, 2005, p., 80-81: Սակայն թերևս կարելի է այս երրորդ մակարդակը բաժանել երկու ենթամակարդակի՝ կապված բնակավայրերի պաշտպանվածության հետ:

13 Գ. Արեշյանի անձնական հաղորդումը:

14 Տե՛ս Է. Վ. Խանզադյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա. III հազարամյակում, Եր., 1967, էջ 12: Ռ. Թորոսյանի 1978 թ. Սբ Հռիփսիմեի տաճարի պեղումների դաշտային օրագիր, Ռ. Թորոսյանի 1980 թ. ուղեգծային արշավների դաշտային օրագիր: Մայր Տաճարի տարածքից վաղ բրոնզեդարյան խեցեղեն հավաքվել է 2009 թ. Ա. Գնունու և Ա. Թադևոսյանի կողմից:

15 Տե՛ս Э. В. Ханзадян. Араратская долина в конце IV- начале II тыс до н. э. (дис. докт. ист. наук в форме науч. доклада), Е., 1985, с. 11.

16 Տե՛ս Л. А. Петросян, նշվ. աշխ., էջ 11-13:

17 Տե՛ս Հ. Սիմոնյան, Ա. Գնունի, Հայաստանի սոցիալ-քաղաքական իրադրությունը վաղ բրոնզի դարում,-

Սևանա լճի ավազանում վաղ բրոնզի դարաշրջանում արբանյակ բնակավայրի կարգավիճակ ուներ նաև Նորաշենը, որը հետագայում վերածվեց Լճաշենի բերդ-շենի մատույցները պաշտպանող ամրոցի[18]: Արցախի հարավում՝ Իշխանագետի և Կենդելենչայի միջագետքում, նման կենտրոնական բնակավայրի դեր խաղում էր Ղարաքյոփակթեփե բնակավայրը, որը շրջապատված էր Գյունեշ-թեփե, Քյուլ-թեփե-3, Ուզուն-թեփե, Շեքերջիկ-թեփե և մի շարք այլ բնակավայրերով[19]: Նշենք, որ նման երևույթ նկատվում է նաև Արածանիի ստորին հոսանքում՝ Ոսկեբեր հովտում: Այստեղ կարելի է զատել բնակավայրերի առավել խիտ տեղաբաշխման մի քանի շրջան: Բնակավայրերի որոշակի կենտրոնացում դիտարկվում է Նորշուն-թեփե, Քոռուջութեփե, հավանաբար՝ Թուլինթեփե բնակավայրերի շուրջ: Ոսկեբեր հովտի հարավում գտնվում է 4 բնակավայրերից բաղկացած հուշարձանախումբ, որոնց մեջ կենտրոնական դիրք է զբաղեցնում Սառվուլու բնակավայրը (2,2 հա.), իսկ երեք բնակավայրերի խումբ գտնվում է դաշտավայրի կենտրոնական հատվածում: Այստեղ առանձնանում է Քեմակսի Մնքիի բնակավայրը (1,2 հա)[20]:

Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ որոշ դեպքերում արբանյակ բնակավայրերը ևս ամրացված էին (Աղաբլուր, Շրեշ բլուր), ընդ որում Աղաբլրի պարսպի հզորությունը կազմում էր 2 մ. այն ժամանակ, երբ բնակավայրը զբաղեցնում էր ընդամենը մոտ 1 հա. տարածք[21]:

Պետք է նշել նաև այն հանգամանքը, որ նույնիսկ խոշոր բնակավայրերը, օրինակ՝ Մեծամորը և Մոխրաբլուրը տեղադրված էին իրարից համեմատաբար մոտիկ: Այս հանգամանքը կապված էր, առաջին հերթին, տարածքի սահմանափակ լինելու հետ: Նույն կերպ, Մերձավոր Արևելքում հնագույն քաղաքները՝ Էրիդուն, Լարսան, Ուրուքը շատ մոտ էին իրար[22]:

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ բնակավայրերի բջջային տեղաբաշխումը հատուկ է շենգավիթյան մշակույթի ոչ բոլոր շրջաններին: Այսպես, Կուրի միջին հոսանքում տեղադրված բնակավայրերը հավասարաչափ բաշխված են գետի երկայնքով և միայն Գուդաբերտղա (Շիդա Քարթլի) բնակավայրի անմիջական հարևանությամբ հաստատագրված է Սվանեթիս արխի արբանյակ-բնակատեղիի առկայությունը[23] Ադրբեջանի հյուսիսարևելյան ծովափնյա գոտու հարավային շրջաններում բնակավայրերը մեկուսի են, իսկ դեպի հյուսիս հանդես է գալիս բջջային համակարգը[24]:

«Հայկական լեռնաշխարհը հայկական և համաշխարհային քաղաքակրթության բնօրրան», Եր., 2004, էջ 61:

18 Տես Հ. Սանամյան, Լճաշենի բերդ-շենի կազմավորման փուլերը և պաշտպանական համակարգը (մինչնախագծային ուսումնասիրություն), «Հուշարձան» տարեգիրք, պր. Զ, Ե., 2010, էջ 50, Նորաշեն բնակավայրի մասին տե՛ս նաև՝ Ю. В. Саядян, Э.В. Алешкинская, Э.В. Ханзадян, Послеледниковые отложения и археология побережья оз. Севан. В кн.: Геология четвертичного периода (плейстоцен) Е., 1974, с. 108.

19 Տես Г. С. Исмаилов, Памятник Кюль-тепе в Физулинском районе.- "Доклады АН Аз ССР". т. XXIV, N. 4, с. 74, նույնի՝ К вопросу о раннебронзовых поселениях (памятник Кюль-тепе). - Известия АН Азербайджанской ССР (далее- Изв.. Аз ССР) 1976, N. 3, с. 62, նույնի՝ Древние поселения Гуручая и Кенделенчая. Баку, 1986, с. 18.

20 Տե՛ս A. Sagona. The Caucasus region in the Early Bronze Age. Oxford, 1982, Part III map XI a sites 253-255, 262-265; R. Wallon, S. Kantman The survey of the Keban Dam. – "Keban project activities 1969", այսուհետև՝ Keban, Ankara 1971, p. 9.

21 Տե՛ս G. Areshian, նշվ աշխ., էջ 79:

22 Տես A. Оппенхейм, Древняя Месопотамия, М., 1990, с. 90.

23 Տե՛ս Г. М. Миндиашвили, Г. Ч. Чиковани. Экспедиция Горийского района. - "Полевые археологические исследования в Грузии в 1986 г.", այսուհետև՝ ПАИ), Тбилиси, 1991, с. 17.

24 Տե՛ս Т. И. Ахундов, Исследования по топографии поселений эпохи ранней бронзы Северо-

Բնակավայրերի բջջային տեղաբաշխման առաջացման մասին գոյություն ունի մի քանի վարկած: Այն կարող էր հանդիսանալ տվյալ բնակավայրի սեգմենտավորման (տրոհման) արդյունք: Բացառված չէ նաև, որ խոշոր բնակավայրերի առկայությունը խթանում էր նորերի կառուցումը[25]:

Պատմաբան Ա. Օպենհայմը գտնում է, որ «ձգողականության կենտրոն» հանդիսացող քաղաքների առաջացումը խթանում էր նաև կենտրոնախույս ձգտումները[26]: Համաձայն մեկ այլ տեսակետի, բնակավայրերի չափերի մեծացումն անխուսափելիորեն պետք է հանգեցներ առավել փոքր բնակավայրերի լքմանը, ինչի օրինակ է վաղ բրոնզի ավարտական փուլում նկատվող բնակչության կենտրոնացումը առավել խոշոր բնակավայրերում[27]: Այսպես, Է. Խանզադյանը գտնում էր, որ էնեոլիթյան շրջանում Մեծամորի տարածքում գոյություն ունեին մի քանի բնակավայր, որոնք հետագայում ներառվել են վաղ բրոնզեդարյան բնակավայրի սահմաններում[28]: Հնագույն սինոյկիզմի (մի քանի բնակավայրերի տարերայնորեն միաձուլվելու գործընթացը) այս երևույթը ամենայն հավանականությամբ տարածված էր նաև Արևելքում: Այդպիսին էին Սիպարը կամ Լագաշը, որտեղ քաղաքային կորիզը աստիճանաբար ներառում էր շրջակա բնակավայրերը[29]: Բոլոր դեպքերում, նման բնակատեղիների առաջացումը նշանավորում էր որոշակի փուլ հասարակության զարգացման գործընթացի մեջ: Կենտրոնական բնակավայրը հնագետ Կ. Քուշնարյովան անվանում է գավառական կենտրոն: Պատմաբան Յու. Անդրեևի և հնագետ Դ. Զդանովիչի ձևակերպմամբ՝ կենտրոնական բնակավայրի առկայությունը վաղ քաղաքի կարևոր հատկանշական գծերից է[30]: Մեծ քաղաք-փոքր քաղաք-ավան համակարգը հատուկ է նաև մ.թ.ա. III հազ. պալեստինյան ուրբանիստական լանդշաֆտին[31]: Փոքրիկ գյուղակները օղակում էին նաև միջագետքյան քաղաքները[32]: Էգեյան աշխարհում վաղ հելլադական դարաշրջանի բնակավայրերում նույնպես արձանագրվում է **որոշակի** հիերարխիա՝ բաղկացած երկու (Լակոնիկա) և երեք կամ չորս մակարդակի բնակավայրերից[33]:

Սակայն, շենգավիթյան մշակույթի բնակավայրերի «ուժային դաշտում» (Յու. Անդրեևի ձևակերպումը) գտնվում էին ոչ միայն արբանյակները: Բնակավայրերը օղակված էին գյուղատնտեսական նշանակության հողերով: Դիտարկվող ժամանակաշրջանում կառուցվում էին ոռոգման համակարգեր (Մոխրաբլուր): Ելնելով մեկ մարդու կողմից օրվա ընթացում ցորենի օգտագործման միջին ցուցանիշից, կարելի է ենթադրել, որ Մոխրաբլուրի բնակչության ապահովման համար անհրա-

---

восточного Азербайджана. - "Археологические и этнографические исследования в Азербайджане", այսուհետև՝ АЭИА, (1980-1981 гг.), Баку, 1986, с. 28.

25 Տես R. Wallon. S. Kantman. Early Bronze... p. 130.

26 Տես А. Оппенхейм, նշվ. աշխ.., էջ 88:

27 Տես E. B. Banning, նշվ աշխ., էջ 19-20, Г. С. Исмаилов. Памятник Кюль-тепе... с. 74, նույնի К вопросу о раннебронзовых поселениях ...с. 62; О. Х. Халпахчян. Строительная культура Армянского нагорья, "Архитектурное наследие", т. 31, М., 1983, с. 104.

28 Է. Խանզադյանի անձնական հաղորդումը:

29 Տես А. Оппенхейм, նշվ. աշխ.., էջ 101:

30 Տես Ю. В. Андреев, Ранние формы урбанизации. "Вестник Древней Истории", 1987, N. 1 с. 10; Д. Г. Зданович. Синташтинское общество: социальные основы "квазигородской" культуры Южного Зауралья в эпоху средней бронзы, Челябинск, 1997, с. 16.

31 Տես Ю. Циркин, История библейских стран, М., 2003, с. 30.

32 Տես А. Оппенхейм, նշվ. աշխ.., էջ 95.

33 Տես C. Mee. Nucleation and Dispresal in Neolithic and Early Helladic Laconia. In: Urbanism in the Aegean Bronze Age. Sheffield, 2001, p. 12.

ժեշտ էր ոռոգել 250-300 հա. տարածք[34]: Հնագետ Ս. Եսայանի ենթադրությամբ՝ Շենգավիթի ջրովի տարածքները պետք է կազմեին 100 հա., իսկ կենսաբան Մ. Թումանյանի կարծիքով՝ Շենգավիթում հայտնաբերված վեցշար գարու աճեցման համար անհրաժեշտ էր, որ զգալի տարածքներ երկար ժամանակի ընթացքում ծածկված լինեին ջրով[35]: Ոռոգման համար էր ծառայում նաև Ծղրակարա (Կախեթի) բնակավայրը արևելքից արևմուտք հատող հորը[36]: Սղնախներ բնակավայրի մոտակայքում, ըստ հնագետ Լ. Պետրոսյանի, հայտնաբերված է ոռոգման համակարգ, որն իր մեջ էր ներառում բազմաթիվ աղբյուրներ և ջրամբարներ: Նշված ժամանակաշրջանում է ձևավորվում Արագած լեռան ողջ հարավային լանջն ընդգրկող արհեստական լճերից և ջրամբարներից բաղկացած ոռոգման համակարգը[37]: Ոռոգման համակարգերի շինարարությունը հաճախ կապվում է հասարակության սոցիալական շերտավորման և կառավարող խավի զատման հետ[38]:

Բնակավայրերի «ուժային գոտում» էին գտնվում նաև շահագործվող հանքավայրերը: Այսպես, մ.թ.ա. IV-III հազ. ամենայն հավանականությամբ շահագործվել են Ակնաձորի, Անտոնովկայի, Ալավերդու, Ֆիոլետովոյի, Քաջարանի, Կապանի և Բլրաշենի (Արարատյան հարթավայր) պղնձի հանքերը, ինչպես նաև Էրգանի-Մադենյան հանքախումբը, որը պղնձով էր ապահովում Եփրատի և Տիգրիսի վերին հոսանքներում տեղադրված բնակավայրերը, Աղիամանից ոչ հեռու գտնվող Զիարեթ հանքավայրը և Մուրջուկ-Կոխորշանյան հանքախմբի հանքավայրերը, որոնք մետաղով էին ապահովում Կարսի, Էրզրումի և, հավանաբար՝ Շիրակի տարածաշրջանները[39]: Պղնձի հնագույն հանքեր հաստատագրված են նաև Վրաստանում՝ Ռաճա, Սվանեթի, Կախեթի)[40]:

Ըստ հնագետ Չ. Բարնեյի, Յանիկ-թեփեի (Պարսկահայք, Ուրմիա լճի ավազան) կառուցման համար անհրաժեշտ քարը բերվում էր 2-3 կմ. հեռավորությամբ գտնվող հանքավայրերից[41]: Այլ բնական պաշարներից պետք է նշել Նախիջևանի Քյուլ-թեփե 1 և Քյուլ-թեփե 2 բնակավայրերի մերձակայքում գտնվող Դուզդաղի և Բոզդաղի աղի հանքերը: Վերջինում արդյունահանումն իրականացվել է փակ եղանակով: Ըստ երկրաբան Կ. Ահունդովի՝ հանքի շահագործման ընթացքում արդյունահանվել է ավելի քան 12 հազար տոննա աղ[42]:

---

34 Տե՛ս Լ. Ջալալբեկյան, Մոխրաբլուրի պատվարները, «Պատմա Բանասիրական Հանդես», այսուհետև՝ ՊԲՀ, 1974, c .4, էջ 157-162, К. Х. Кушнарева. Южный Кавказ в IX-I тыс. до н. э., СПБ, 1993, с. 210, նույնի՝ Ранние комплексные общества Кавказа. — "Древние общества Кавказа в эпоху палеометалла", СПБ, 1997, с. 26-27.

35 Տե՛ս С. А. Есаян. Ереван. Е., 1969 с. 13, М. Г. Туманян. Избранные труды. Е., 1957, с. 168.

36 Տե՛ս Г. И. Мирцхулава. Работы в Иорском ущелье. — АО 1981 г. М., 1983, с. 413.

37 Տե՛ս Հ. Սիմոնյան, Արտադրող հասարակության և վաղ երկրագործական մշակույթի ձևավորումը Հայաստանում, - «Հայկական քաղաքակրթությունը հնագույն ժամանակներից մինչև քրիստոնեության ընդունումը (գիտաժողով)», Ե., 2000, էջ 38, Ա. Քալանթար, Արագածը պատմության մեջ, Ե., 1935, էջ 61-62, Л. Петросян, նշվ. աշխ., էջ 13-14:

38 Տե՛սW. Allan. Ecology, techniques and settlement patterns. – "Man, Settlement, Urbanism" (այսուհետև՝ MSU), Cambridge, 1972, p. 223, G. Areshian, նշվ. աշխ., էջ 79:

39 Տե՛ս А. Ц. Геворкян, Из истории древнейшей металлургии Армянского нагорья. Е., 1980, с. 25-26, 36; P. de Jesus. Metal resources of Ancient Anatolia. - "Anatolian Studies" (այսուհետև՝ AS) vol. XXVIII L., 1978; p. 98; A. Palmieri, K. Sertok, E. Chernikh. From Arslantepe to Arsenical Copper technology in Eastern Anatolia. – "Between the rivers..." p. 340.

40 Տե՛ս Г. Инаниашвили, М. Чартакани, В. Майсурадзе, Г. Гобеджишвили, Г. Муджири. Памятники древнего горно-рудного производства Грузии. — "Дзиебани", N.2, Тбилиси, 1998 с. 58.

41 Տե՛ս Ch. Burney, Excavations at Yanik-tepe, North West Iran. – "Iraq" vol. XXIII. P. 2 p. 141.

42 Տե՛ս В. Алиев. Древние соляные копи в Нахичевани.— Изв... Аз ССР, 1983, N. 4, с. 85,

Բնակավայրերի սահմաններից դուրս ծավալվող տնտեսական գործունեության մասին է վկայում այն փաստը, որ վաղ բրոնզի ժամանակաշրջանում շահագործվող կավի հանքերը հիմնականում տեղադրված էին վերջիններիս անմիջական հարևանությամբ[43]:

Վաղ բրոնզեդարյան ժամանակաշրջանում առաջանում են մասնագիտացված բնակավայրեր: Այսպես, Արսլանթեփեի VIB1 հորիզոնում բացակայում են կայծքարե գործիքների պատրաստուքները, հայտնաբերված են միայն պատրաստի գործիքներ: Հետևաբար, պետք է լիներ բնակավայր, որը մասնագիտանար քարե գործիքներ պատրաստելու մեջ: Կառնուտում (Շիրակ) հաստատագրված է մետաղամշակման ողջ ցիկլն այն ժամանակ, երբ այստեղ մետաղահանքեր չկան: Հետևաբար, կարելի է ենթադրել, որ գոյություն ունեին առանձին բնակավայրեր, որոնք մասնագիտանում էին քարի մշակման կամ մետաղյա ձուլակտորներ արտադրելու մեջ: Այդպիսի բնակավայրերից էր, ամենայն հավանականությամբ, Ֆիոլետովոն (Լոռի), որի բնակիչները մասնագիտանում էին հանքաքարի արդյունահանման և հարստացման մեջ[44]: Նմանատիպ արհեստագործական փոքր ավանները հատուկ էին Էգեյան աշխարհի և Պաղեստինի ուրբանիզացված լանդշաֆտին[45]:

Գ. Չայլդը, պատմաբան Ռ. Մակ Ադամսը բնակավայրերի մասնագիտացումը համարում են քաղաքի կարևոր հատկանիշներից մեկը, սակայն մշակութաբան Պ. Վաթենմեյքերը գտնում է, որ նման երևույթ հնարավոր է նաև գյուղերում, կապված սոցիալական հարաբերությունների զարգացման հետ[46]: Միևնույն օրինաչափությունը ինչպես միջագետքյան, այնպես էլ եվրոպական ուրբանիստական կենտրոնների հատկանշական գծերից էր[47]: Այսպիսով, Հայկական լեռնաշխարհի բնական պայմանների և լանդշաֆտային գոտիների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մ.թ.ա. IV-III հազ. նպաստավոր պայմաններ էին ստեղծվել ուրբանիզացվող գործընթացների զարգացման և խորացման համար: Ընդհանրապես, վաղ քաղաքների ձևավորման վրա մեծ ազդեցություն ունեին նաև արտաքին գործոնները, մասնավորապես աշխարհագրական դիրքը[48]:

3. Բնակավայրերը և դրանց սահմանների ընդգծումը

Հետազոտման համար անհրաժեշտ հաջորդ չափանիշը բնակավայրերի բացարձակ չափերն են: Վաղ բրոնզի ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխար-

---

Տե՛ս նաև՝ «Կոմունիստ», թերթ, Բաքու, 12 դեկտեմբերի, 1976 թ.:

43 Տե՛ս К. О. Навасардян. Технико-технологические показатели керамики Армянского нагорья в III-I тыс. до н. э.. (автореферат дис... канд. ист. наук.) Е., 1994, с. 6.

44 Տե՛ս C. Caneva From Chalcolithic to Early Bronze Age III in Arslantepe: A Lithic Perspective. – "Between the rivers... ", p. 331, Р. С. Бадалян, Раннебронзовое поселение близ с. Карнут. - ՊԲՀ, 1984, N 1, էջ, 230, А. Ц. Геворкян, А. Палмиери. Фиолетово. – «Հ. Մարտիրոսյանի հիշատակին նվիրված գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ», Եր., 2001, էջ 12:

45 Տե՛ս Т. В. Блаватская. Греческое общество II тыс. до н. э. и его культура. М., 1976 с. 107, Ю. Циркин, նշվ աշխ., էջ 30:

46 Տե՛ս R. Mc Adams. Evolution of Urban society. Early Mesopotamia and prehistoric Mexico. Chicago 1966, P. Wattenmaker. Town and village economies in an early state society. – "Paleorient" vol. 13, N. 2 Paris 1987, p. S. Stoddart, նշվ. աշխ., էջ .910:

47 Տե՛ս S. Stoddart, նշվ. աշխ., էջ. 930:

48 Տե՛ս В. Массон. Типология древних городов и-исторический процесс. В сб.: Древние города. Л., 1977, с. 6.

հում և հարակից շրջաններում ձևավորվում է բնակավայրերի բարդ հիերարխիա: Կարելի է առանձնացնել բնակավայրերի մի քանի խումբ՝ մինչև 1,5 հա., 2-5 հա. և երրորդը՝ մինչև 10 հա.[49]: Միևնույն ժամանակ, եղած տեղեկությունները թույլ են տալիս զատել առավել խիտ բնակեցված մի քանի տարածաշրջաններ, որտեղ գտնվող բնակավայրերն աչքի էին ընկնում միանման չափերով: Այսպես, Եփրատի վերին ավազանում հաստատագրված 84 բնակավայրից 67-ը զբաղեցնում էին մինչև 2 հա. տարածք, 13-ը՝ 2-6 հա, 2-ը՝ 6-8 հա և միայն մեկը՝ Նորշունքեփեն, մոտ 20 հա[50]: Ընդ որում, հարկ է նշել, որ 2 հա-ից ավել տարածք ունեցող բնակավայրերի մեծ մասը, այդ թվում նաև Նորշունքեփեն, գտնվում են Ոսկեբեր հովտում: Կուրի միջին հոսանքի՝ Շիդա Քարթլիի տարածքի բնակավայրերը հիմնականում զբաղեցնում են մինչև 1 հա տարածք: Այս տիպի բնակավայրերը Կ. Քուշնարյովան անվանում է գյուղական ավաններ[51]: Ավելի մեծ չափեր ունեն Շենգավիթը, Ջրահովիտը, Գառնին, Աղթամիրը (Աշտարակի շրջ.), Կառնուտը (6 հա), Էլառը (10 հա), Հառիճը (Շիրակ) (12 հա)[52]: Պարսկահայքում գտնվող Յանիկ-թեփե բնակավայրը զբաղեցնում էր 6 հա. տարածք եւ ուներ մոտ 2 հազար մարդ բնակչություն[53]:

Այս առնչությամբ վկայաբերենք Հայկական լեռնաշխարհի հարակից շրջաններին առնչվող մի շարք տվյալներ: Միջագետքի համար 6-7 հա. տարածքի առկայությունը համարվում է քաղաքի նախապայման[54]: Վերլուծելով Էգեյան աշխարհի բնակավայրերի առանձնահատկությունները՝ Գ. Չայլդը քաղաքների թվին է դասում Կրետեում գտնվող Գուրնիյա և Մալֆի բնակավայրերը (2,5 և 1,5 հա. տարածք):

Գ. Չայլդը քաղաքի գոյության պարտադիր պայման է համարում մեծաքանակ բնակչությունը: Հնագետ Վ. Մասոնը, զարգացնելով Չայլդի համակարգը (շարքային բնակավայրեր՝ մինչև 1000 բնակիչ, խոշոր տոհմային ավաններ՝ մինչև 5000 բնակիչ), քաղաքի հատկանիշ է համարում 5000-ից ավել բնակչությունը: Հնագետ Կ. Քուշնարյովայի հաշվարկներով՝ Նորշունքեփեում բնակվում էր 5-6 հազար մարդ[55]: Հնագետ Բ. Բլոուետը քաղաքի հատկանշական գծերից մեկը համարում է համեմատաբար մեծ չափերը[56]:

Քաղաքագոյացման մասին վկայող հաջորդ գործոնը բնակավայրի **ամրացվածությունն** է: Ընդհանրապես, պաշտպանական ամրությունների առկայությու-

49 Տե՛ս K. X. Кушнарева. Южный Кавказ... с. 56.

50 Տե՛ս A. G. Sagona. Նշվ. աշխ., հ. II, էջ 300-310, հ. III, քարտեզ XI a.:

51 Տե՛ս А. И. Джавахишвили, Строительное дело и архитектура поселений Южного Кавказа в V-III тыс. до н. э., Тбилиси, 1975, с. 112; Т. Н. Чубинишвили, К древней истории Южного Кавказа. Тбилиси 1971, с. 55, К. Х. Кушнарева. Южный Кавказ... с. 59; նույնի՝ Южный Кавказ в V-II тыс. до н. э. (автореферат дис... докт ист. наук) Е., 1986 с. 34. A. G. Sagona, նշվ. աշխ., հ. I, էջ 250:

52 Տե՛ս Է. Խանզադյան, Էլառ-Դարանի, Ե., 1979, էջ 12, Р. С. Бадалян, նշվ աշխ., էջ 229, Л. А. Петросян, նշվ. աշխ., էջ 11-13, Т. С. Хачатрян, Древняя культура Ширака. Е., 1974, с. 34, рис. 8. Ըստ Հ. Սիմոնյանի դիտարկումների՝ Շենգավիթի բնակատեղին իր ծաղկման շրջանում՝ մինչև մ.թ.ա. III հազ. երկրորդ քառորդը, զբաղեցրել է ավելի մեծ տարածք: Տե՛ս Հ. Սիմոնյան, Շենգավիթի դամբարանադաշտը, «Հին Հայաստանի մշակույթը», պր. XIV, Ե., 2008, էջ 86-87:

53 Տե՛ս Ch. Burney. Excavations at Yanik-tepe... p. 141.

54 Տե՛ս В. М. Массон. Типология... с. 6.

55 Տե՛ս S. Stoddart, նշվ. աշխ., էջ 910, В. М. Массон, Вопросы социологической интерпретации древних жилищ и поселений. – "Реконструкция древних общественных отношений по материалам жилищ и поселений." Л., 1974, с. 7; К. Х. Кушнарева. Ранние комплексные общества... с. 26-27.

56 Տե՛ս B. W. Blouet. Factors influencing the evolution of the settlement patterns. -: MSU p. 6; Г. Чайлд. У истоков европейской цивилизации. М., 1952, с. 55.

նը, դրանց կառուցման եղանակը կախված է աշխարհագրական պայմաններից, տվյալ հասարակության սոցիալ-քաղաքական զարգացման մակարդակից, տեղական ավանդույթներից և այլն[57]: Վաղ բրոնզի հնավայրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս պաշտպանական ամրությունների էվոլյուցիան: Վաղ բրոնզի դարաշրջանի հուշարձաններից պաշտպանական համակարգի ամենապարզունակ եղանակը ներկայացված է Բլուր (Պուլուր - Սաքյոլ) բնակավայրի (Արևմտյան Եփրատի վերին ավազան) XI հորիզոնում: Բնակավայրը պաշտպանում էին բլրի պարագծով տեղադրված կացարանների հետևի պատերը: Ըստ Վ. Մասոնի՝ այս եղանակը ներկայացնում էր նստակյաց հողագործական բնակավայրերի պաշտպանական ամրությունների նախնական ձևը[58]: Վաղ բրոնզի դարի բնակավայրերում ի հայտ է գալիս ամրաշինական կայուն համակարգ: Ամրոցաշինությունը զարգանում է մի քանի ուղղություններով: Նախ պետք է նշել հում աղյուսից պարիսպների շինարարությունը (Մոխրաբլուր, Ադաբլուր, Գուդաբերտղա, Գեոյ-թեփե K1, K2 հորիզոններ՝ Պարսկահայք, Ուրմիա լճի ավազան): Քարե հիմքին խարսխված հում աղյուսե պարսպով էր պաշտպանված նաև Գառնին և Գեոյ-թեփեի K3 հորիզոնը[59]: Ամրաշինական տեխնիկայի զարգացումն ակներև է Յանիկ-թեփեի օրինակի վրա: Այսպես, բնակավայրի վաղ բրոնզեդարյան II շինարարական հորիզոնում ամրությունները ներկայացված են հում աղյուսե պարսպով, III շինարարական հորիզոնում պարիսպը վերակառուցվում է և ամրացվում է քարե շարվածքով արտաքին կողմից[60]: Քարե պարիսպներ հաստատագրված են Մեծամորում, Էլառում, Շենգավթում, Հառիճում, Շահլամա 2 և 3, Շոմուլու-թեփեում, Ղալաքյոփեկթեփեում և մի շարք այլ բնակավայրերում[61]:

Մ.թ.ա. IV-III հազ. որոշ բնակավայրերում հանդես են գալիս կրկնակի պարսպաշարեր (Արսլանթեփեն՝ VID2 հորիզոն, Գազանոց՝ Աշտարակի շրջ., Շահլամա-3, Լճաշեն, բնակավայրերը)[62]:

Վաղ բրոնզի դարաշրջանում պաշտպանական ամրությունները հաճախ հանդես են գալիս համակարգված տեսքով, ներառելով որմնահեծերը, աշտարակները: Այսպես, որմնահեծեր հաստատագրված են Շենգավիթ, Թեփեջիք բնակա-

---

57 Տե՛ս M. J. Rowlands. Defense: a factor in the organization of settlement. – MSU, p. 449-454.

58 Տե՛ս Հայկական ճարտարապետության պատմություն, հ. 1, Ե., 1996, էջ 53, В. М. Массон. К эволюции оборонительных стен оседло земледельческих поселений. - "Краткие сообщения ин-та археологии" (далее-КСИА), вып. 108, М., 1966, с. 43, A. Schachner. Von der Rundhutte zum Kaufmannhaus Kulturhistorische Untersuchungen zur Entwicklung prahistorischer Wohmhauser in Zentral-, Ost und Sudostanatolien. Oxford 1999, B. 1 S. 132, B.2 Ab. 66.

59 Տե՛ս Գ. Արեշյան, Ադաբլուրի պեղումները, ՀՀ-ում 1989-1990 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջանի զեկուցումների թեզիսներ (այսուհետև՝ թեզիսներ), Եր., 1991, էջ 10, К. Х. Кушнарева, Ранние комплексные общества... с. 28-29, А. Е. Симонян, Археологические памятники в культурном наследии Армении IX тыс. до н. э –IX в. до н. э. – "Культурное наследие Туркменистана (глубинные истоки и современные перспективы)", Ашгабат-СПб, 2000, с. 70, T. Burton-Brown. Excavations at Azarbaijan 1949. L., 1951 p. 34-35, Է. Վ. Խանզադյան, Գառնի IV, Եր., 1969, էջ 20:

60 Տե՛ս Ch. Burney. Excavations at Yanik tepe, North West Iran, p. 143-144.

61 Տե՛ս Է. Վ. Խանզադյան, Մեծամորի պեղումների արդյունքները, (թեզիսներ 1987-1988 թթ.) Եր., 1989 էջ 4,Է. Խանզադյան, Մեծամորը վաղ բրոնզի դարաշրջանում (թեզիսներ), Ե., 1998 էջ 30, С. А. Есаян, նշվ. աշխ., էջ 21,27, Т. С. Хачатрян, նշվ. աշխ., էջ 36 :

62 Տե՛ս Գ. Արեշյան, Կ. Դաֆադարյան, Հ. Սիմոնյան, Գ. Տիրացյան, Ա. Քալանթարյան, Հնագիտական հետազոտություններ Հայկական ՍՍՀ Աշտարակի և Նաիրիի շրջաններում, «Լրաբեր հասարակական գիտությունների» (այսուհետ՝ «Լրաբեր»), 1977, հ. 4, էջ 88, С. А. Есаян, նշվ. աշխ., էջ 27, A. Palmieri, նշվ. աշխ., էջ 208, Գ. Միքայելյան, Սևանի ավազանի կիկլոպյան ամրոցները, Ե., 1968, Հ. Սանամյան, նշվ. աշխ,, էջ 49:

վայրերում[63]: Աշտարակներով էր հզորացված Շահլամա 3-ի պարիսպը[64]: Բացի պաշտպանական ամրություններից, բնակավայրի սահմանն ընգծվում էր նաև դարպասի առկայությամբ: Ընդսմին դարպասը, որպես բնակավայրի առավել խոցելի հատված, հաճախ ամրացվում էր: Այսպես, Էլառում պարսպի մուտքը բլրի հյուսիսարևմտյան հատվածում է, այսինքն՝ տեղադրված է ոչ թե ճակատային մասում, այլ մի փոքր արևմուտք: Մուտքի երկու կողմերում տեղադրված են ոչ մեծ որմնահեծեր: Յանիկ-թեփեում դարպասի ներսի կողմում տեղադրված էր պահակակետի համար նախատեսված կառույց[65]: Հարկ է նաև նշել, որ մուտքը կամարաձև էր և առաստաղը ձևավորված էր աստիճանաձև շարված աղյուսներով[66]: Պարիսպների կառուցումը պահանջում էր մեծ քանակությամբ աշխատուժի ներգրավվածություն: Հետևաբար այդ աշխատուժն այլևս չէր կարող ներգրավված լինել արտադրության այլ ճյուղերում: Այսպիսով, պարսպաշինությունը հնարավոր էր միայն տվյալ հասարակության սոցիալական զարգացման որոշակի մակարդակի պայմաններում[67]: Բնական է, որ ամրաշինական կառույցներն արտացոլում են նախևառաջ պաշտպանական գործառույթները (բնակիչների պաշտպանություն արտաքին թշնամուց, մթերքի պաշտպանություն և պահպանություն), սակայն դրանք կարող էին ունենալ նաև ծիսական գործառույթներ[68]:

Մ.թ.ա. IV-III հազ. հուշարձաններում արձանագրվում է դամբարանադաշտերի զատումը բնակավայրերից և նեկրոպոլիսների՝ ննջեցյալների քաղաքների տեղադրումը պարիսպներից դուրս[69]: Դա հուշում է, որ պարիսպը կարող էր որոշակի դեր խաղալ ներս-դուրս համակարգի խորհրդանշական ընկալման մեջ: Բացի այդ, համայնքի բոլոր անդամների ջանքերով կառուցված պարիսպն այսպես թե այնպես պետք է խորհրդանշեր տվյալ համայնքի միասնությունը: Քիչ թե շատ կայուն ամրաշինական համակարգի առկայությունն, ըստ պատմաբան Յու. Անդրեևի, **կվազիքաղաքի**՝ վաղ քաղաքին նախորդող կազմավորման հատկանշական գծերից է: Պարիսպների և բարդ ամրաշինական համակարգի առկայությունը քաղաքային բնակավայրերի հատկանշական գիծ են համարում նաև Գ. Չայլդը, Վ. Մասոնը, մշակութաբան Խոսե Օրտեգա - ի - Գասետը[70]:

Միևնույն ժամանակ, դամբարանադաշտերի զատումը բնակավայրից, կացարանների հատակի տակ քաղումներ կատարելու ավանդույթի մարումը, որը դիտարկվում է վաղ բրոնզի դարաշրջանում, կարող էր նշանակել, որ բնակա-

63 Տե՛ս A Scachner, նշվ. աշխ., հ. I, էջ 142, Ս. Հ. Սարդարյան, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Ե., 1976, էջ 176: Պետք է նշել նաև Հ. Խալփախչյանի այն կարծիքը, ըստ որի Շենգավիթի պարսպաշարի որմնահեծերը չունեին պաշտպանական նշանակություն, այլ ծառայում էին միայն պարսպի ամրացման համար: Օ. Халпахчян, նշվ. աշխ., էջ 88:

64 Տե՛ս С. А. Есаян, Древняя культура... с. 27.

65 Տե՛ս Է. . Խանզադյան, Էլառ-Դարանի, էջ 12-13, Ch. Burney. Excavations at Yanik-tepe, Azerbaijan 1962. Third Preliminary Report – "Iraq" vol. XXVI P. 1 L., 1964, p. 60.

66 Տե՛ս նույն տեղում:

67 Տե՛ս К. Х. Кушнарева. Ранние комплексные... с. 28.

68 Տե՛ս M. J. Rowlands, նշվ. աշխ., էջ. 454. В. М. Массон. Кавказский путь к цивилизации: вопросы социокультурной интерпретации. - Древние общества... с. 126; S. Stoddart, նշվ. աշխ., էջ 912:

69 Տե՛ս А. Е. Симонян, А. В. Гнуни, Культовые сооружения Армянского нагорья и их эволюционное развитие в VIII тыс. до н. э. – "Эрмитажные чтения памяти Б. Б. Пиотровсокого", СПб., 1998, с. 84. Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ սահմանի սիմվոլիկ ընկալումը թեպետ հանդիսանում է քաղաքի հատկանշական գիծ, սակայն հատուկ է բնակավայրերի և ավելի վաղ տիպերի համար: Տե՛ս Ю. М. Плюсин, Этодологические подходы к проблеме археологической реконструкции. – "Методика и методология археологических реконструкций." Новосибирск 1994, с. 41).

70 Տե՛ս Г. Чайлд, նշվ. աշխ., էջ 104; Ю. Андреев. Ранние формы... с. 10-11, В. М. Массон. Вопросы социологической... с. 7, Х. Ортега-и-Гасет, Восстание масс. М., 2002, с. 101.

վայրն արդեն ընկալվում էր բնակիչների կողմից որպես միասնական կենտրոն: Ինքնին բնակավայրի՝ որպես միասնական մարմին ընկալվելը հաստատագրված է դեռևս նեոլիթյան ժամանակաշրջանում: Կոնիայի դաշտում գտնվող Չաթալ Հույուք բնակատեղիի սրբավայրում պատկերված է բնակատեղին և դրանից որոշ հեռավորության վրա՝ ժայթքող հրաբուխը[71]: Փաստորեն բնակավայրի հատակագիծ՝ կենտրոնական կառույցը և այն շրջապատող կառույցները պատկերված են Ալի Բայրամալի (ԼՂՀ Շահումյանի շրջ., Քարվաճառի ենթաշրջան) բնակավայրի ժայռապատկերներում[72]: Փաստորեն, ուսումնասիրվող ժամանակաշրջանում բնակչի միկրոտաշխարհի կենտրոն է հանդիսանում ոչ թե կացարանը, այլ ողջ բնակավայրը, ինչը հանդիսանում է քաղաքի հատկանշական գծերից մեկը[73]:

4. Բնակավայրի ներքին տարածքի կառուցապատումը

ա) Տարածքի ընդհանուր բարեկարգումը

Վաղ բրոնզի դարաշրջանի բնակավայրերում հանդես է գալիս **հրապարակի** գաղափարը: Բնակավայրի կենտրոնական տարածքում գտնվող հրապարակներ հաստատագրված են Բլուրի (Պուլուր -Սաքյոլ) XI-IX հորիզոններում, Թաշքուն Մնքլում (Եփրատի վերին ավազան), Ղարաքյոփեկթեփեում, Շահլամա-2 և այլ բնակավայրերում[74]: Միևնույն ժամանակ վաղ բրոնզի դարաշրջանում հրապարակն արդեն կարող էր ընկալվեր որպես միասնական ճարտարապետական անսամբլ: Այսպես, Մոխրաբլուրի կենտրոնական հրապարակում գտնվող պաշտամունքային կառույցի ծեփվածքի մեջ ավելացված էին փայլարի բեկորներ, ինչի արդյունքում **այն** շողում էր արևի շողերի տակ, առանձնացնելով կառույցը հում աղյուսով կառուցված կացարանների ընդհանուր գորշ զանգվածից:

Կենտրոնական հրապարակը հաճախ համարվում է քաղաքի կարևորագույն հատկանիշներից մեկը: Ավելին, ըստ Ջ. Ռիքվերտի՝ սրբավայրը օղակող հրապարակի առկայությունը համարվում է բնակավայրի սրբազործման հատկանիշը[75]: Բնակավայրի կենտրոնական հատվածում պաշտամունքային համալիրներ հաստատված էին նաև Ազարակում՝ Աշտարակի շրջ. և Ալի Բայրամալիում[76]: Յու. Վ. Անդրեևի ենթադրությամբ՝ կենտրոնական սրբավայրի առկայությունը կվազիքաղաքի հատկանշական գծերից է[77]:

Հրապարակի նշանակությունն ընդգծվում էր այնտեղ կառուցված **մոնումենտալ արվեստի նմուշներով** (Մոխրաբլուր, Այ, Քիրբեթ էլ Քերակ՝ Պաղեստին)[78]: Մոնումենտալ շինությունների թվին պետք է դասվեն Նորշունթեփեի VIII-VII և VI

71 Տես Дж. Мелларт, Древнейшие цивилизации Ближнего Востока. М., 1982. с. 85.
72 Տես Д. Ахундов, Архитектура древнего и средневекового Азербайджана. Баку, 1986, с.80.
73 Տես О. Шпенглер, Закат Европы. т. 2, М., 1999, с. 112.
74 Տես H. Kosay. Pulur (Sakyol) excavations 1969. – "Keban 1969" p. 104, S. Helms. Taskun Mevkii. - AS. vol. XXII L., 1972 p. 16., Ա. Գնունի, Հայաստանի կուր-արաքսյան մշակույթի ուղղանկյուն հատակագծով կացարանները և նրանց տարածման սահմանները, «Բանբեր Երևանի համալսարանի», 1994, h. 3, էջ 26, С. А. Есаян.., Древняя культура... с. 26.
75 Տես Х. Ортега-и-Гасет, նշվ. աշխ., էջ 101; J. Rykwert. The idea of a town. Cambridge. 1989, p. 73.
76 Տես Г. Е. Арешян, Искусство Куро-Аракской культуры. "Материалы II международного симпозиума по армянскому искусству" (отдельный оттиск) Е.,1978 с. 6, Т. Н. Чубинишвили, նշվ. աշխ., էջ 73, П. С. Аветисян, Предварительные результаты раскопок памятника Агарак – "Археология, этнология и фольклористика Кавказа". Св. Эчмиадзин, 2003 с. 54.
77 Տես Ю. В. Андреев, Ранние формы... с. 6.
78 Տես Г. Е. Арешян, նշվ. աշխ., էջ 6,A. G. Sagona, նշվ. աշխ., h. I, էջ 82:

(պատմական Նորաշեն՝ Եփրատի վերին ավազան) և Արսլանթեփեի VIB1 հորիզոններում հայտնաբերված պալատական կառույցները: Նորշունթեփեի համալիրի հյուսիսում բացվել է նաև պաշտամունքային օջախներով սենյակը: Պետք է նշել, որ Արսլանթեփեի կառույցի արտաքին պատերը հզորացված էին որմնահեծերով[79]: Մոնումենտալ ճարտարապետության առկայությունը հանդիսանում էր ուրբանիզացված բնակավայրերի կարևոր հատկանիշներից մեկը[80]:

Վաղ բրոնզի դարաշրջանում բնակավայրերը հաճախ տարածվում են պարսպի սահմաններից դուրս: Այսպես, Շենգավիթ բնակավայրը, ըստ Հ. Սիմոնյանի, միայն իր անկման շրջանում է պարփակվում պարսպապատ տարածքում[81]: Կենտրոնական պարսպապատ տարածքի առկայությունը և դրանից դուրս բնակավայրի տարածումը չէր կարող չհանգեցնել բնակավայրում այդ տարածքի նշանակության որոշակի ընդգծմանը: Արդյունքում՝ վաղ բրոնզի դարում հանդես է գալիս **միջնաբերդի** գաղափարը: Միջնաբերդերը մեծ դեր էին կատարում ոչ միայն տվյալ բնակավայրի պաշտպանությունն ապահովելու գործում, այլև մատնանշում էին տվյալ բնակավայրի տնտեսական, հոգևոր, մշակութային և քաղաքական նշանակությունը: Այսպես, Նորշունթեփեի պարիսպը, տեղադրված լինելով բնակավայրի վերին՝ կենտրոնական հատվածում, օղակում էր մի շարք տնտեսական, պաշտամունքային և վարչական բնույթի շինություններ[82]: Մեծամորի կենտրոնական պարսպապատ տարածքում հայտնաբերվել է ոսկե օղով մանկան թաղում: Է. Խանզադյանը չի բացառում, որ այդտեղ կարող էր տեղադրված լինել բնակավայրի սրբավայրը[83]: Փաստորեն, պարիսպը և միջնաբերդը վաղ բրոնզի դարաշրջանում հանդես են գալիս որպես սոցիո-մշակութային երևույթ և, հետևաբար, ունեն նման երևույթներին հատուկ հատկանիշները, այդ թվում նաև կրողների ֆետիշացումը[84]: Միջնաբերդի առկայությունը համարվում է վաղ քաղաքի հատկանիշներից մեկը:

Որոշակի առումով, շենգավիթյան մշակույթի միջնաբերդով բնակավայրերի կառուցապատումը կարելի է համեմատել Յու. Անդրեևի կողմից Էգեյան ավազանում զտվող էքստրավերտ կառուցապատմամբ բնորոշվող բնակավայրերի հետ, երբ չբնակեցված տարածքը, որտեղ կենտրոնացված էին պաշտամունքային կառույցները, շրջապատված էր բնակելի ավաններով[85]:

Փողոցներն ու ոչ կենտրոնական հրապարակները ևս մեծ դեր էին խաղում բնակավայրերում: Փողոցներ հաստատագրված են Շենգավիթում, Ագարակում, Զրահովտում, Մոխրաբլուրում և այլ բնակավայրերում[86]: Փողոցները ոչ միայն

79 Տե՛ս H. Hauptman. Norsuntepe. 1973. - AS vol. XXIV L.,1974, p. 44, նույնի՝ Norsuntepe 1974. - AS vol. XXV L., 1975 p. 44 A. Palmieri. Excavations at Arslantepe. Malatya. - AS vol. XXXI, p/ 207, նույնի՝ Arslantepe, Malatya 1983, - AS vol. XXXIV p. 108.

80 Տե՛ս В. М. Массон, Вопросы... с. 7, S. Stoddart, նշվ. աշխ., էջ 910:

81 Տե՛ս Հ. Սիմոնյան, Շենգավթի դամբարանադաշտը, էջ 86:

82 Տե՛ս H. Hauptman. Norsuntepe. 1971 - AS vol. XXII L. 1972 p. 26, նույնի՝ Norsuntepe 1973. - p. 44.

83 Տես է. Վ. Խանզադյան, Մեծամորի պեղումների արդյունքները, էջ 41, Э. В. Ханзадян. Новые находки культовых памятников в Мецаморе. Всесоюзная археологическая конференция - "Достижения советских археологов в XI пятилетке" (тезисы докладов). Баку, 1985, с. 354.

84 Սոցիո-մշակութային երևույթի բնորոշման և կրողների ֆետիշացման մասին տե՛ս П. Сорокин. Общая социология. В кн.: П. Сорокин, Человек, цивилизация, общество. М., 1992, с. 190.

85 Տե՛ս Ю. В. Андреев, Раннегреческий полис. Л., 1976, с. 25-27, , S. Stotddart, նշվ. աշխ., էջ 912:

86 Հայկական ճարտարապետության պատմություն, հ. I, էջ 41, Ս. Հ. Սարդարյան, Նախնադարյան... Շենգավթի հատակագիծը,, է. Վ. Խանզադյան, Զրահովտի պեղումների արդյունքները, - թեզիսներ 1989-1990, Եր., 1991, էջ 11, П. С. Аветисян, նշվ. աշխ., էջ 55:

փոխադրման ուղիներ էին, այլև հավանաբար ունեին որոշակի խորհրդանշական իմաստ: Այսպես, հավանաբար ծիսական նշանակություն ուներ Ամիրանիս-Գորայի (Ջավախք, Ախալցխայի շրջ.) ժայռափոր ճանապարհը, որը տանում էր դեպի պաշտամունքային համալիր[87]: Փողոցի նշանակությունն ընդգծում էր նաև դեպի փողոցը ճակատային մասով ուղղված շինությունների առկայությունը (Ցիխիա-Գորայի՝ Շիդա Քարքլի, B2 հորիզոնի հ. 2 և 3 կացարանները): Հատկանշական է, որ Նորշունքեփեի ծայրամասից միջնաբերդ տանող փողոցը գոյատևել է մի քանի հորիզոնների կյանքի ընթացքում, այն ժամանակ, երբ այլ օժանդակ փողոցները բազմիցս փոխել էին իրենց տեղադրությունը[88]: Ոչ կենտրոնական հրապարակներ արձանագրված են Կվացխելերի, Խիզաննանք-Գորա՝ Շիդա Քարքլի, Քոռուջուքեփե և այլ բնակավայրերում: Հարկ է նշել, որ Քոռուջուքեփեում նշված հրապարակում տեղադրված էր պաշտամունքային կառույց: Ծիսակատարությունների համար էր օգտագործվում նաև Շենգավիթում երկու բնակարանային համալիրների միջև գտնվող տարածքը[89]: Փողոցների քիչ թե շատ կայուն ցանցի առկայությունը Յու. Վ. Անդրեևը համարում է կվազիքաղաքի հատկանշական գծերից մեկը[90]:

Ջրամատակարարումը: Ինչպես նշվեց, շենգավիթյան մշակույթի բնակավայրերը հիմնականում տեղադրված էին գետերի ափերին: Այդ պարագայում անհրաժեշտ էր կատարել ջրի ֆիլտրացում: Նման սարք հայտնաբերված է Յանիկ-թեփեի կացարաններից մեկում[91]: Բնակավայրերի բնականոն կենսագործունեության երաշխիքներից էր նաև աղբյուրների՝ բնակավայրի տարածքում գտնվելը (օրինակ՝ Թեթրի Ծղարոյում՝ Քվեմո Քարքլի)[92]: Արսլանքեփեում հաստատագրված են ջրի պահպանման համար ավազաններ, ինչպես նաև ջրահեռացման առու: Բնակավայրի տարածքում առուներ կան Արսլանքեփեում և Նորշունքեփեում[93]:

բ) Բնակելի թաղամասերի կառուցապատումը

Վաղ բրոնզե դարում ի հայտ են գալիս կանոնավոր հատակագծման որոշ տարրեր: Այսպես՝ Բլուրի (Պուլուր -Սաքյոլ) XI-IX հորիզոններում կացարանները տեղադրված են բլրի լանջին, պարագծով՝ երկու շարքերով: Արտաքին շարքում գտնվող կացարանները հաղորդակցվում են ներքին շարքի կացարանների հետ միջանցքների միջոցով[94]: Կառուցապատման հաջորդ եղանակը ներկայացված է կլոր կացարաններն օղակող ուղղանկյուն կացարանների համալիրներով (Շենգավիթ, Մոխրաբլուրի V հորիզոն)[95]: Իրար կողքի և ետևի պատերով հպված կացարանները օղակում էին անցումները և ոչ մեծ հրապարակները նաև Խիզան-

---

87 Տե՛ս Т. Н. Чубинишвили, նշվ. աշխ., էջ 230:

88 Տե՛ս З. Э. Махарадзе, Поселение Цихиа-Гора и проблема переодизации культур эпохи бронзы на территории Грузии. – "Между Азией и Европой. Кавказ в IV-I тыс. до н. э." СПБ, 1996, с. 74, A. G. Sagona. . նշվ. աշխ.,հ. I, էջ 74:

89 Տե՛ս А. И. Джавахишвили, նշվ. աշխ., է 114.

90 Տե՛ս Ю. В. Андреев, Ранние формы... с. 6.

91 Տե՛ս Ch. Burney, Excavations at Yanik-tepe, p. 140.

92 Տե՛ս Г. Ф. Гобеджишвили, Селище Тетри-Цкаро. Тбилиси, 1978 с. 6.

93 Տե՛ս A. Palmieri, Excavations at Arslantepe. Malatya. - p. 207, H. Hauptman. Norsuntepe. 1971 p. 26, նույնի՝ Norsuntepe 1973 p. 44.

94 Տե՛ս H. Kosay, Pulur (Sakyol) excavations. - Keban, 1969, p. 104.

95 Տե՛ս Ս. Հ. Սարդարյան, Նախնադարյան հասարակությունը...էջ 33-34; Հայկական ճարտարապետության պատմություն, հ. I էջ 41; А. И. Джавахишвили. նշվ. աշխ., էջ 237, К. Х. Кушнарева. Южный Кавказ... с. 73.

նանք-Գորա և Կվացխելերի բնակավայրերում[96]: Յուրատեսակ քաղամասեր էին ներկայացնում արհեստական դարավանդներին տեղադրված կացարանների համալիրները (Էլառ, Հառիճ, Ամիրանիս-Գորա), որոնք, ըստ ճարտարապետ Ա. Ջավախիշվիլու, նահապետական մեծ ընտանիքի կացարաններ են[97]: Նահապետական մեծ ընտանիքի բնակության համար էին նախատեսված նաև Շենգավիթի, Մոխրաբլուրի բազմասենյականոց բնակարանային համալիրները: Նման երևույթը հատուկ է տոհմային հասարակության քայքայման և վաղագույն քաղաքագոյացման փուլին: Այսպես, Էգեյան աշխարհի բնակվայրերում (Էվտրեզիս, Ջիգուրիս) քաղաքային կենցաղին հատուկ տարրերի հետ մեկտեղ հայտնաբերված են յուրատեսակ «քաղամասեր» կազմող երկու-երեք սենյականոց բնակարանների համալիրներ[98]: Կառուցապատման նմանատիպ եղանակը Յու. Անդրեևի կողմից բնորոշվում է որպես ինտրավերտ, ընդ որում նշվում է, որ քաղաքային բնակավայրերի հիմք կարող էին հանդիսանալ ինչպես էքստրավերտ, այնպես էլ ինտրավերտ կառուցապատմամբ բնորոշվող բնակավայրերը[99]: Ավելին, մ.թ.ա. IV-III հազ. Հայկական լեռնաշխարհում արձանագրվում է կառուցապատման այս երկու եղանակների համադրում: Այսպես, Շենգավիթում, ըստ հնագետ Ե. Բայբուրթյանի, բնակավայրի կենտրոնական հատվածում, տեղադրված էր մոնումենտալ բնույթի շինություն: Բլրի գագաթին պաշտամունքային կառույց տեղադրված էր նաև Ամիրանիս-Գորայում[100]: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ քաղաքային համայնքի ձևավորումը անհնար է առանց կենցաղի անհատականացման և տոհմային բջիջների աստիճանաբար ուծացման քաղաքային համայնքում[101]: Հատկանշական է, որ Շենգավիթի վերին հորիզոններում նկատվում է կլոր հատակագծով շինությունների տրամագծի փոքրացում: Մոխրաբլուրի V շինարարական հորիզոնում կենտրոնական կլոր կառույցն արդեն կորցնում է իր գերիշխող դիրքը: Մեկուսի կանգնած կացարանների թվի աճ արձանագրվում է նաև Բլուրի (Պուլուր-Սաքյոլ) VIII-VII հորիզոններում: Նշված գործընթացների դրսևորում կարելի է համարել պաշտամունքային անկյունների և հատվածների հաստատագրումը շենգավիթյան մշակույթի կենտրոնական կացարանն օղակող ուղղանկյուն կացարաններում, որոնք նախատեսված էին նահապետական մեծ ընտանիքը կազմող առանձին ընտանիքների բնակության համար[102]: Յու. Անդրեևը կանոնավոր կառուցապատման առկայությունը համարում է կվազիքաղաքային մշակույթի հատկանշական գծերից մեկը: Բացի այդ, նշվում է, որ կվազիքաղաքներին հատուկ է չափազանց խիտ կառուցապատումը, երբ տեղ չի մնում նույնիսկ տնամերձ հողատարածքների համար: Միևնույն ժամանակ, ինչպես նշվեց՝ շենգավիթյան մշակույթի որոշ բնակավայրերում՝ Բլուր (Պուլուր-Սաքյոլ), Թաշքուն Մնքիի (Արածանիի ստորին հուսանք, Ոսկեբեր հովիտ) հաստատագր-

96 Տե՛ս Ա. И Джавахишвили, նշվ. աշխ., էջ 114:

97 Տե՛ս Հայկական ճարտարապետության պատմություն, էջ 43, А. И. Джавахишвили, նշվ. աշխ., էջ 159-160: Հարկ է նշել, որ Ա. Ջավախիշվիլին Ամիրանիս-Գորայի կառուցապատումը չի համարում դասական դարավանդային:

98 Տե՛ս Н. А. Сидорова, Искусство Эгейского мира. М., 1976 с.53.

99 Տե՛ս Ю. В. Андреев, Раннегреческий полис. с. 26.

100 Տե՛ս Е. Байбуртян, Последовательность развития древнейших культур в Арнении. Е., 1938, Архив Государственного музея истории Армении. Папка N. 2 с. 38 А. И. Джавахишвили, նշվ. աշխ., էջ159-160:

101 Տե՛ս Э. Д. Фролов, Рождение греческого полиса. Л., 1988 с. 64,80.

102 Տե՛ս Ա. Գնունի, Շենգավթյան մշակույթի բնակավայրերում տեղադրված սրբավայրերը և պաշտամունքային կառույցները,, ՊԲՀ, 2006, N 1, էջ 238:

ված են բավականաչափ մեծ չկառուցապատված տարածքներ[103]:

գ) Բնակարանային համալիրները և դրանց ներքին հարդարանքը:

Կվազիքաղաքային մշակույթի կարևոր բաղադրատարրերից է բնակելի համալիրների համեմատաբար բարեկեցիկ կահավորումը: Շենգավիթյան մշակույթի բնակարանային համալիրների հետազոտությունը թույլ է տալիս հանգել մի շարք կարևոր եզրակացությունների: **Առաջին,** հանդես են գալիս իրենց արտաքին տեսքով բնակավայրում ուրույն տեղ գրավող բնակելի կացարաններ: Այսպես՝ Շենգավիթի 19-20 կացարանների համալիրի (1959 թ. պեղումներ) պատերի երկայնքով տեղադրված էին որմնասյուներ[104]: **Երկրորդ,** վաղ բրոնզեդարյան կացարաններում նկատելի է կառույցի գեղագիտական ընկալումը[105]: Այսպես, Մոխրաբլուրի XI շինարարական հորիզոնում կլոր կառույցին կից ուղղաձիգ պատը շարված էր երկու գույնի (բաց դեղին և մուգ մոխրագույն) աղյուսներից: Գորակա՝ Վրաստանի Սաչխերեի շրջ. և Ղարաքյուփեկթեփե բնակավայրերում կացարանների հատակը ներկված էր կարմիր գույնով, Քյուլ-թեփեում կարմիր ներկով ներկված էին ոչ միայն պատերը, այլև օջախի դիմաց գտնվող խորշը: Ըստ ճարտարապետ Վ. Հարությունյանի, Շենգավիթի որոշ կացարանների պատերն ու հատակը ներկված էին կապույտ գույնով: Կվացխելեբիի կացարանների հատակը ծածկված էր մոխրի լուծույթով և փայլեցված էր[106]: Հատկանշական է, որ գեղարվեստական խեցեղենի և կիրառական արվեստի իրերը բնակարանային համալիրներում զբաղեցնում էին որոշակի տեղ և ընկալվում էին միայն որոշակի կետերից: Այսպես, Մոխրաբլուրի III հորիզոնում կացարանի անկյունում տեղադրված կարասի զարդանախշն ամբողջովին դիտարկվում էր կացարան մտնելիս[107]: **Երրորդ,** ձևավորվում են համեմատաբար բարեկարգ բնակելի համալիրներ: Բնակելի համալիրներում հաստատագրված են ներքին բակեր (Շենգավիթ, Զրահովիտ), որոնք անհրաժեշտ էին Հայկական լեռնաշխարհի համեմատաբար շոգ կլիմայի պայմաններում[108]: Որոշ համալիրներում հաստատագրված են բաց նախամուտքեր (Շենգավիթ, Բլուր, Խիզաննանք-Գորա, Կվացխելեբի և այլն)[109]: Կացարաններում հաստատագրված են տարբեր տեսակի նստարան-մաստաբաներ (Գառնի, Շենգավիթ, Սղնախներ, Յանիկ-թեփե, Քյուլ-թեփե, Բլուր, Արսլանթեփե և այլն)[110]: Մեկեղի (Լեռնային Դաղստան) բնակավայրում հայտնաբերված է նստարան-պառկելատեղ: Շենգավիթի կացարաններից մեկում հայտնաբերված

---

103 Տե՛ս Ю. В. Андреев, Ранние формы... с 7.

104 Տե՛ս Ս. Սարդարյան, Հայաստանը քաղաքակրթության օրրան Եր., 2004, էջ 295291- 292:

105 Դեկորատիվ արվեստում պաշտամունքային տարրերի մասին տե՛ս Г. Е. Арешян, նշվ. աշխ., էջ 5. История первобытного общества. т. 3 Эпоха классообразования. М., 1988 с. 381, Л. Яффе. Символы в изобразительном искусстве. В кн.: К. Г. Юнг, М.-Л. Фон Франц, Дж. Л. Хендрсон, И. Якоби, Л. Яффе. Человек и его символы. М., 1998 с. 231-232, История Древнего мира, т. I, Ранняя Древность. с. 113

106 Տե՛ս Վ. Հարությունյան, Հայկական ճարտարապետություն (դասախոսությունների համառոտ շարադրանք), Ե., 1974, էջ 7, նույնի՝ Каменная летопись армянского народа. Е., с. 5; Г. Е. Арешян, նշվ. աշխ. էջ 5; Д. А. Ахундов, նշվ. աշխ., էջ 45, Г. Г. Пхакадзе, А. З. Орджоникидзе, Итоги работы Сачхерской археологической экспедиции. - ПАИ в 1981 г. Тбилиси, 1984, с. 17; А. И. Джавахишвили, նշվ. աշխ., էջ 120:

107 Տե՛ս Г. Е. Арешян, նշվ. աշխ., էջ 7-8:

108 Տե՛ս Ս. Հ. Սարդարյան, Հայաստանը...էջ 292, Է. Վ. Խանզադյան, Զրահովտի... էջ 9:

109 Տե՛ս Ս. Հ. Սարդարյան, նույն տեղում, H. Kosay. Pulur (Sakyol) excavations 1969.- Keban 1969. p. 110.

110 Տե՛ս Է. Վ. Խանզադյան, Գառնի IV, Ե., 1969, էջ 12, Л. А. Петросян, նշվ. աշխ., էջ 17-18, Ch. Burney. Excavations... p. 145, A. Palmieri. Arslantepe 1982, p. 236, A. Sagona, նշվ. աշխ., h. I, էջ 75:

են խսիրի մնացորդներ[111]: Բնակարանային համալիրներում կենտրոնական դիրք էր գրավում օջախը, որի շուրջ կենտրոնանում էր ընտանիքի ողջ գործունեությունը: Գոյություն ունեին նաև վառարաններ: **Չորրորդ,** վաղ բրոնզի դարաշրջանում արձանագրվում է բնակելի համալիրներներում հատուկ առանձնացված պաշտամունքային, տնտեսական անկյունների զատումը: Դրա նպատակն էր կացարանի օգտակար տարածքի առավել ամբողջական օգտագործումը[112]: Կացարանների ներքին հարդարանքի տարրերից են հացահատկի և այլ մթերքների պահպանման հորերը (Էլառ, Չիրկեյ, Գալգալաթլի՝ Դաղստան)[113]: Տնտեսական հորերի հետ մեկտեղ հանդես են գալիս տնտեսական նշանակության խորշեր: Այդպիսի խորշեր հաստատագրված են Յանիկ-թեփեի հ. 16 և 17 կացարաններում[114]: Հանդես են գալիս կացարաններին կից տնտեսական և օժանդակ կառույցներ (Քյուլ-թեփե, Յանիկ-թեփե, Շենգավիթ, Մոխրաբլուր, Հան Իբրահիմ Շահ՝ Արածանիի ստորին հոսանք, Ոսկեբեր հովիտ)[115]: Գ. Չայլդի ենթադրությամբ՝ տնային արհեստագործական համալիրները քաղաքին նախորդող բնակավայրերի հատկանշական գծերից են[116]:

5. Արտադրական գործունեության կազմակերպումը

Բացի բնակելի համալիրներում տեղադրված արհեստանոցներից, շենգավիթյան մշակույթի բնակավայրերում հաստատագրված են առանձին կանգնած արտադրական համալիրները:

ա) Գյուղատնտեսական համալիրներ: Սրանց թվում պետք է հիշատակել գոմերը և փարախները (Նորշունթեփե, հավանաբար Ամիրանիս-Գորա)[117]: Գյուղատնտեսական մթերքների վերամշակման խոշոր կենտրոն է պեղվել Արսլանթեփեի VIB1 հորիզոնում: Տարածքի մի մասում իրարից նեղլիկ փողոցով բաժանված կացարաններ էին, որտեղ հայտնաբերվեցին հացահատկի պահպանման շտեմարան-հորեր և վառարաններ: Մյուս հատվածում տեղադրված էր ընդարձակ փարախ, ինչպես նաև որպես սպանդանոց ծառայող փայտե ծածկով հարթակներ[118]:

բ) Արհեստագործական համալիրներ: Մեկուսի կանգնած մետաղագործական համալիրներ հայտնաբերված են Բաբա-Դերվիշ՝ Աղստևի հովիտ, Ջրահովիտ, Ամիրանիս-Գորա, Ղարաքյոփեկթեփե և այլ բնակավայրերում[119]: Պեղում-

---

111 Տես Р. М. Мунчаев, Кавказ на заре бронзового века. М., 1979 с. 176.

112 Տես А. И. Джавахишвили, նշվ. աշխ. էջ. 206: Բնակելի համալիրներում պաշտամունքային անկյունների մասին մանրամասն տե՛ս նաև՝ Ա. Գնունի, Շենգավթյան մշակույթի բնակավայրերում տեղադրված սրբավայրերը և պաշտամունքային համալիրները:

113 Տե՛ս է. Վ. Խանզադյան, Էլաե-Դարանի, էջ 15-16, М. Г. Гаджиев. Поселения и жилища Дагестана эпохи ранней бронзы (к истории древней архитектуры). – "Древняя и средневековая архитектура Дагестана." Махачкала, 1989, с. 28-29.

114 Տե՛ս Ch. Burney, Excavations at Yanik-tepe... p. 141.

115 Տես О. А. Абибулаев, Энеолит и бронза на территории Нахичеванской АССР. Баку, 1982 с. 45; Ch. Burney. Excavations at Yanik-tepe... p. 141; H. Ertem. Han Ibrahin Sah. 1971 - AS vol XXII p. 22; է. Խանզադյան, Ջրահովտի..., էջ 5, Գ. Արեշյան, Հ. Սիմոնյան, Գ. Սարգսյան, Գ. Մոչարյան, Հ. Օհանյան, Հայագիտական կենտրոնի 1977-1978 թթ. դաշտային հնագիտական աշխատանքները, ԲԵՀ, 1979, հ. 2, էջ 205, տե՛ս Ս. Հ. Սարգսյան, Հայաստանը...., էջ 285, 290, 293, 295:

116 Տե՛ս Г. Чайлд, նշվ. աշխ., էջ 54:

117 Տե՛ս A. G. Sagona, նշվ. աշխ., հ. I, էջ 65,. А. И. Джавахишвили, նշվ. աշխ., էջ 61-62:

118 Տե՛ս A. Palmieri, Excavations at Arslantepe. Malatya. - AS vol. XXXI L., 1981 p. 207.

119 Տե՛ս է. Վ. Խանզադյան, Ջրահովտի պեղումների արդյունքները, թեզիսներ, 1989-1990, էջ 11, Т. Н.

ների ժամանակ հայտնաբերված են նաև բրուտագործական համալիրներ (Լորուտ, Վելիքենտ՝ Դաղստան)[120]: Հատկանշական է, որ Շենգավիթում պեղված քարամշակման արհեստանոցներից մեկում հայտնաբերվեց օջախի զոհարան հենակ: Զոհարան հենակներ հաստատագրված են նաև Լորուտի և Գառնիի բրուտագործական արհեստանոցներում: Այս փաստը վկայում է արհեստագործական դասի ձևավորման մասին: Վերջինիս համար արհեստագործությունը դարձել էր հիմնական զբաղմունք, որին նվիրվում էր ողջ օրը և, հետևաբար, անհրաժեշտություն էր ծագում աշխատավայրում հոգևոր կարիքները բավարարելու համար հատուկ անկյուն ստեղծել[121]: Հետաքրքիր է արտադրական գործունեության կազմակերպումը Թեթրի Ծղարո բնակավայրում, որտեղ հատուկ նշանակության շինություններում կենտրոնացված էր քարե գործիքների արտադրությունը: Հատկանշական է, որ արհեստանոցին կից հայտնաբերված էր սենյակ, որն ըստ հնագետ Գ. Գոբեջիշվիլու՝ նախատեսված էր վարպետների համար[122]: Արհեստների, մասնավորապես մետաղագործության զարգացումը, մեկուսի կանգնած արհեստանոցների առկայությունը Գ. Չայլդը և Վ. Մասսոնը համարում են քաղաքային բնակավայրի հատկանշական գծերից մեկը: Հնագետներ Ռ. Վալլոնն ու Ս. Քանթմանը քաղաքի հատկանիշ համարում են բնակավայրում շքեղ խեցեղենի առկայությունը[123]:

գ) Համայնական պաշարների պահպանումը: Բնակարանային համալիրներին կից շտեմարան-հորերի հետ մեկտեղ (ինչն ինքնին հասարակության սոցիալական զարգացման ցուցիչ է) վաղ բրոնզի դարաշրջանում գոյություն ունեին ընդհանուր համայնական նշանակության շտեմարաններ (Յանիկ-թեփեի հ. I շինությունը, պաշտամունքային համալիրի հետ զուգորդված Քիրբեթ Քերակի շտեմարանը, Նորշունքթեփեի համալիրներին կից գյուղատնտեսական մթերքների պահպանման և վերամշակման համար նախատեսված կառույցները): Այլ բնակավայրերում (օրինակ՝ Էլառ) ցորենը պահպանվում էր կավածեփ հորերում կամ արկղերում: Խոշորագույնները նախատեսված էին մինչև 300 կգ ցորենի պահպանման համար[124]: Մթերքների պահպանման համայնական և մասնավոր շտեմարանների գոյությունը հուշում է հասարակության սոցիալական շերտավորման և կառավարման կամ ինքնակառավարման սաղմերի առաջացման մասին:

Чубинишвили, նշվ. աշխ., էջ 56, Г. С. Исмаилов, Этапы развития древнейшей металлургии и металлообрабатывающего производства на территории Азербайджана. - КСИА). вып. 192. М., 1987, с. 15.

120 Տե՛ս Ս. Դևեջյան, Հնագիտական հետազոտություններ Տաշիր-Ջորագետում, Ե., 2001, էջ 13, М. Г. Гаджиев , նշվ. աշխ., էջ 37:

121 Տե՛ս Ս. Դևեջյան, նույն տեղում, Հ. Սիմոնյան, Լ. Խաչատրյան, Շենգավիթի բնակավայրի 2003թ. պեղումները - «Հին Հայաստանի մշակույթը», պր. XIII, Եր.,,2005, էջ 56, Է. Վ. Խանզադյան, Գառնի IV, էջ 13-14, տե՛ս Ա. Գնունի, Շենգավթյան մշակույթի բնակավայրերում տեղադրված սրբավայրերը..., էջ 244-245:

122 Տե՛ս Т. Н. Чубинишвили, նշվ. աշխ., էջ 56, Г. Ф. Гобеджишвили, նշվ. աշխ., էջ 23:

123 Տե՛ս В. М. Массон, Основные направления культурно-исторического процесса. – "Становление производства в эпоху энеолита и бронзы". М., 1981 с. 43, Г. Чайлд., նշվ. աշխ., էջ 83, 102, R. Wallon, S. Kantman, Early Bronze... p. 131:

124 Տե՛ս Է. Վ. Խանզադյան, Էլառ-Դարանի, էջ 23, Е. А. Байбуртян, По поводу древней керамики из Шреш блура. - СА т. III с. 209; Ch. Burney, Excavations. p. 143 , A. G. Sagona, նշվ. աշխ., հ. I, էջ 82:

6. Առևտուրը և տարածաշրջանային կապերը

Հայկական լեռնաշխարհը, գտնվելով առևտրական ճանապարհների խաչմերուկում, չէր կարող մեծ դեր չխաղալ միջազգային տարանցիկ առևտրում: Դրա մասին վկայում է այն փաստը, որ Վերին Եփրատի ավազանում շենգավիթյան մշակույթի որոշ բնակավայրեր (Նորշունքեփե, Արսլանքեփե) հիմնադրվել էին ուշ ուռուքյան բնակավայրերի տեղում[125]: Հնագիտական նյութը թույլ է տալիս դիտարկել որոշակի առևտրական կապեր Հյուսիսային Միջագետքի, Կենտրոնական Անատոլիայի և Էգեյան աշխարհի հետ[126]: Հայկական լեռնաշխարհի պղինձը և դրա համաձուլվածքները շենգավիթյան մշակույթի գոյատևման ողջ ընթացքում արտահանվում էին ոչ միայն Մերձավոր Արևելք (ինչի մասին վկայում է հայտնաբերված կաղապարներում կատարված ձուլվածքների քաշի համապատասխանությունը՝ շումերա-բաբելոնյան չափորոշիչներին), այլև հյուսիսսևծովյան տափաստաններ: Շենգավիթի բնակատեղիի ստորին հորիզոնում հայտնաբերված լոկ մեկ արհեստանոցի տարածքում հաստատագրված կավանոթ-հալոցների պարունակած մետաղի հաշվարկը կազմում է մոտ 300 կգ[127]: Առևտրի նյութ էր նաև վանակատը: Վանա լճի ավազանի և Բայազետի հանքավայրերի վանակատն ի հայտ է գալիս Կառնուտում և Դվինում, իսկ Գեղասարի հանքավայրերի վանակատը՝ Վելիքենտում: Միաժամանակ, անդրկովկասյան վանակատի հայտնաբերումը Իրանում պետք է կապվի շենգավիթյան մշակույթի դեպի այդ տարածաշրջան տարածման հետ[128]:

Այսպիսով, շենգավիթյան մշակույթի տիրույթում առևտուրը բավականաչափ զարգացած էր, իսկ խոշոր բնակավայրերը հանդիսանում էին առևտրի կենտրոններ: Բնակավայրի առևտրի կենտրոն հանդիսանալը, արհեստագործության բարձր մակարդակի հետ մեկտեղ, ըստ Գ. Չայլդի, Բ. Բլոուեթի, հնագետներ Ս. Էյսների, Ա. Գալիոնի, Դ. Զդանովիչի, հանդիսանում է քաղաքային բնակավայրի կարևորագույն հատկանիշներից մեկը[129]:

7. Պաշտամունքային գործողությունների կազմակերպումը

Մերձավոր Արևելքում բնակավայրում իրենց դիրքով ուրույն տեղ զբաղեցնող սրբավայրեր հանդես են գալիս դեռևս նեոլիթյան ժամանակաշրջանից: Սակայն այս վաղագույն սրբավայրերը իրենց ճարտարապետությամբ հիմնականում չէին տարբերվում այլ կառույցներից: Բացի այդ, թեև դրանք հաճախ տեղադրված էին բնակավայրի առանձնացված հատվածում, սակայն ձևավորման բազմազանությունը և կառույցների քանակությունը (Չաթալ Հույուք) թույլ է տալիս համաձայնել

125 A. Sagona, նշվ. աշխ., h. I, էջ 70:

126 Տես T. Burton Brown, նշվ. աշխ., էջ 25, H. T. Russel. Pre-Classical pottery of Eastern Anatolia. Based of a survey by Ch. Burney of sites along the Ephrates and Lake Van. Oxford 1980.

127 Տես А. Ц. Геворкян, А. Палмиери. Фиолетово с. 13, А. Геворкян. Торговля металлом в раннебронзовом веке Армении. - «Հին Հայաստանի մշակույթը», պր. XIII, էջ 68-69, Հ. Սիմոնյան, Ա. Գնունի, Սոցիալ-քաղաքական իրավիճակը... էջ 64:

128 Տես Р. Бадалян, Обсидиан Армянского нагорья в системе локальных и межрегиональных связей: новые данные. «Հին Հայաստանի մշակույթը», պր. XII, էջ 18-26:

129 Տե՛ս Г. Чайлд, նշվ. աշխ., էջ 39-40, B. Blouet, նշվ. աշխ., էջ 5-6 Т. В. Блаватская, նշվ. աշխ., էջ 108-109, Д. Г. Зданович, նշվ. աշխ., էջ 19, S. Eisner, A. Galion, St. Eisner. Urbanism pattern. Denver 1997 p. 51.

Ա. Ջավախիշվիլու այն տեսակետին, որ նմանատիպ կառույցները ծառայում էին առանձին տոհմերին[130]:

Վաղ բրոնզի դարում Հայկական լեռնաշխարհում ձևավորվում է պաշտամունքային կառույցների հիերարխիա: Ծեսը կարող էր իրականացվել ինչպես տանը, այնպես էլ բնակավայրի առանձին հատվածներում և ընդհանուր համայնական սրբավայրերում: Վերջիններիս հանդես զալը նշանավորում էր համայնքի կողմից իր միասնականության գիտակցումը: Չևավորվում են ուրույն ճարտարապետությամբ բնորոշվող սրբավայրեր (Մոխրաբլուր, Ջրահովիտ): Այսպես, Մոխրաբլուրի տաճարական կառույցն իրենից ներկայացնում էր երկաստիճան կառույց, որի վրա խոյանում էր բազալտե սյունը: Ուրույն ճարտարապետությամբ էր բնորոշվում նաև Ջրահովտի պաշտամունքային կառույցը[131]: Ծեսի և պաշտամունքային կառույցների ճարտարապետության բարդացումը վկայում է սրբավայրերը սպասարկող խավի ձևավորման մասին: Հարկ է նաև նշել այն փաստը, որ Քիրբեթ էլ Քերակ բնակավայրում ցորենի շտեմարանը զուգորդված էր տաճարական կառույցի հետ: Ժինվալիում (Վրաստան) պաշտամունքային կառույցի անմիջական հարևանությամբ հայտնաբերված է ծիսական խեցեղեն պատրաստելու արհեստանոց[132]: Պաշտամունքային կառույցները քաղաքային բնակավայրի հիմք էին հանդիսանում նաև Միջագետքում[133]:

Խոշոր պաշտամունքային կենտրոնների առկայությունը Յու. Անդրեևը համարում է կվազիքաղաքի հատկանշական գծերից մեկը: Ինչ վերաբերում է նախաքաղաքային մշակույթին, ապա դրան, ըստ Գ. Չայլդի և Յու. Անդրեևի, բնորոշ է ծեսի որոշակի մասնագիտացումը[134]:

Վաղ բրոնզի դարաշրջանի պաշտամունքային համակարգի հաջորդ կարևոր առանձնահատկություններից է տարածաշրջանի յուրատեսակ պաշտամունքային լանդշաֆտի ձևավորումը: Այսպես, Ագարակի պաշտամունքային համալիրը ներառում էր Ամբերդ գետի երկայնքով տասնյակ հեկտարներ ձգվող տուֆի մշակված մերկացումներ, ծիսական հարթակներ, ժայռի մեջ փորված առվակներ և «զոհարաններ»: Նմանատիպ պաշտամունքային համալիրներ հաստատագրված են Մեծամորում, Գյուլիքուլաղում (Շիրակ), Բջնիում (Կոտայք): Փաստորեն բավականաչափ մեծ տարածաշրջանում ձևավորվում է միանման պաշտամունքային համալիրների ստեղծման պրակտիկան, այսինքն՝ ստեղծվում է միասնական պաշտամունքային լանդշաֆտ[135]: Տեղանքի առանձնահատկությունները օգտագործվում են նաև Ալի Բայրամլիում, որտեղ «հասարակական» շինությունը օղակված է ժայռապատկերներով[136]:

Պաշտամունքային գործողությունը ծավալվում էր նաև բնակավայրի սահ-

130 Տե՛ս А. И. Джавахишвили, նշվ. աշխ., էջ 326:
131 Տե՛ս G. Areshian, նշվ աշխ, էջ 80-81, Է. Խանզադյան, Ջրահովտի պեղումների արդյունքները, էջ 11:
132 Այս թեմայի շուրջ մանրամասն տե՛ս Ա. Գնունի, Շենգավթյան մշակույթի բնակավայրերում տեղադրված սրբավայրերը և պաշտամունքային կառույցները, ՊԲՀ, 2006, N 1:
133 Տե՛ս Ա. Опенхейм, նշվ. աշխ., էջ 76:
134 Տե՛ս S. Stoddart, նշվ. աշխ., էջ 910, Ю. В. Андреев, նշվ. աշխ., էջ 10:
135 Տե՛ս П. С. Аветисян, նշվ. աշխ., 54; Է. Խանզադյան, Կ. Մկրտչյան, Է. Պարսամյան, Մեծամոր, Եր., 1973, էջ 142-164., Հ. Հակոբյան, Ա. Գնունի, Գիտարկումներ ճանապարհի և փողոցի գործառնական և խորհրդանշական գործառույթների միասնականության վերաբերյալ, «Էջմիածին», 2007, Թ, էջ 90, Ի. Ղարիբյան, Հ. Հակոբյան, Ա. Գնունի, Գ. Խաչատրյան, Տ. Վարթանեսովա, Բջնիի հուշարձանները, «Հուշարձան» տարեգիրք, Զ, Եր., 2010, էջ 71:
136 Տե՛ս Г. С. Исмаилов, О. А. Даниелян, Археологические работы Физулинского отряда в 1976 г. - АЭИА в 1976 г. Баку, 1979, с. 4-5.

մաններից դուրս: Այսպես Ամիրանիս-Գորայում սրբավայրը տեղադրված էր լեռան գագաթին և դեպի սրբավայր տանող էր ժայռափոր ճանապարհը[137]: Ա. Օպենհայմը նշում է, որ նմանատիպ երևույթ նկատվում է նաև Միջագետքում[138]:

8. Սոցիալական շերտավորումը

Հասարակության սոցիալական շերտավորումը և կառավարչական ապարատի առկայությունն, ըստ Գ. Չայլդի, հանդիսանում է քաղաքի գլխավոր հատկանիշներից մեկը[139]: Հայկական լեռնաշխարհի շենգավիթյան մշակույթի հուշարձաններում հասարակության սոցիալական շերտավորումը արտահայտված է բավականաչափ թույլ, սակայն նույնիսկ զարգացած ուրբանիստական հասարակություններում, օրինակ՝ Միջագետքում, քաղաքը սոցիալական առումով գրեթե միատարր էր[140]: Բացի այդ, մի շարք փաստեր վկայում են վաղ բրոնզե դարում, մանավանդ՝ դրա ավարտական փուլում հասարակության շերտավորման մասին: Նախ, դրանք Արսլանթեփեի և Նորշունթեփեի պալատական կառույցներն են[141]: Տարբեր տեսակի շինանյութի օգտագործումը միևնույն բնակավայրում (Շենգավիթ, Քյուլ-թեփե) կարող է մատնանշել բնակչության սոցիալական շերտավորումը[142]: Բնակչության սոցիալական շերտավորման և առանձին անհատների ձեռքում հարստության կուտակման մասին վկայում է նաև դամբարանային գույքը՝ Շենգավիթի դամբարաններից հայտնաբերված ոսկյա իրերը, ինչպես նաև Ժինվալիի «քրմուհու դամբարանից» հայտնաբերված օքրայով լի 70 անոթները[143]: Հասարակության շերտավորման մասին են վկայում մարդկային զոհաբերություններով «արքայական» դամբարանը Արսլանթեփեում[144]: Սոցիալական բարձր խավի ներկայացուցչին էր պատկանում նաև Ամիրանիս-Գորայում հայտնաբերված զոհարանով և դաշույնով դամբարանը[145]: Եթե ոչ սոցիալական, ապա ունեցվածքային շերտավորման մասին են վկայում Թաշքուն Մաքիից, Նորշունթեփեից, Արսլանթեփեից և Շենգավիթից հայտնաբերված կնիքները: Ընդսմին, հարկ է նշել, որ Շենգավիթի կնիքը գտնվել է հորի հատակից[146]: Հասարակության ունեցվածքային շերտավորման մասին է վկայում նաև Երևանում գտնված բրոնզե իրերի գանձը: Գանձերի առկայությունը Տ. Բլավատսկայան համարում է քաղաքային կյանքի հատկանշական գծերից մեկը, երբ հասարակությունը, հավանաբար, մշակում էր որոշակի նորմեր, որոնք դատապարտում էին արժեքների անօրինական յուրացումը[147]:

137 Տե՛ս Т. Н. Чубинишвили, նշվ. աշխ., էջ 73:
138 Տե՛ս А. Опенхейм, նշվ. աշխ., էջ 109:
139 Տե՛ս Stoddart, նշվ. աշխ., էջ 910:
140 Տե՛ս А. Опенхейм, նշվ. աշխ., էջ 89:
141 Տե՛ս H. Hauptman, Norsuntepe. 1973, p. 44 նույնի՝ Norsuntepe 1974. - p. 44 A. Palmieri. Excavations at Arslantepe. Malatya. p. 207, նույնի՝ Arslantepe, Malatya 1983, - AS vol. XXXIV p. 108.
142 Տե՛ս О. А. Абибулаев, նշվ. աշխ., էջ 83-99. Հ. Սիմոնյան, Ա. Գնունի, Հայաստանի սոցիալ-քաղաքական զարգացումը, էջ 64:
143 Տե՛ս Ս. Հ. Սարդարյան, Նախնադարյան հասարակությունը..., էջ 180, Հ. Սիմոնյան, Ա. Գնունի, նույն տեղում:
144 Տե՛ս G. Areshian, նշվ աշխ., էջ 82:
145 Տե՛ս Т. Н. Чубинишвили, նշվ աշխ., էջ 69:
146 Տե՛ս Հ. Սիմոնյան, Ա. Գնունի, նույն տեղում:
147 Տե՛ս А. А. Мартиросян, Приереванский клад эпохи ранней бронзы. - КСИА вып 134 М., 1966 с. 108, Т. В. Блаватская, նշվ. աշխ., էջ 7: Միևնույն ժամանակ, բացառված չէ, որ երևանյան գանձը հորված էր պատերազմական վտանգի պահին:

Եզրակացություններ

Վերը նշված փաստերը թույլ են տալիս հանգել հետևյալ եզրակացություններին.

Առաջին՝ վաղ բրոնզի դարաշրջանում ուրբանիզացիոն գործընթացները ընթանում էին բավականաչափ ակտիվ, ընդգրկելով շենգավիթյան մշակույթի գրեթե ողջ տիրույթը:

Երկրորդ՝ նշված գործընթացները, սակայն, խիստ անհամաչափ էին դրսևորվում. խոշոր ուրբանիզացված կենտրոնների հետ մեկտեղ գոյություն ունեին փոքր ավաններ և «գյուղական» տիպի բնակավայրեր:

Երրորդ՝ շենգավիթյան մշակույթի քաղաքատիպ բնակավայրերը առաջացնում էին իրենց շուրջը ուրբանիզացված տարածքներ:

Չորրորդ՝ շենգավիթյան մշակույթի խոշոր բնակավայրերում ընթացող քաղաքագոյացման գործընթացներն ընդհանուր առմամբ համահունչ էին Մերձավոր Արևելքում և Էգեյքում ընթացող նմանատիպ գործընթացներին: Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ բացի քաղաքագոյացման ընդհանուր օրինաչափություններից, գոյություն ունեին մասնավոր և հասարակական շինությունների, ներբնակավայրային կոմունիկացիաների տեղադրությունը կանխորոշող էկոլոգիական և տեխնոլոգիական գործոններ[148]:

Հինգերորդ՝ շենգավիթյան մշակույթի որոշ բնակավայրեր օժտված էին վաղ քաղաքին հատուկ գրեթե բոլոր հատկանշական գծերով և հետևաբար կատարում էին վաղ քաղաքի հիմնական գործառույթները՝ հանդիսանալով գյուղատնտեսական, առևտրաարհեստագործական, մշակութագաղափարախոսական և ռազմավարչական կենտրոններ[149]:

Վեցերորդ՝ Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. IV-III հազ. ընթացող ուրբանիզացիոն գործընթացները հանդես են գալիս համակարգված ձևով, ինչը թույլ է տալիս բնորոշել դրանք որպես սոցիո-մշակութային երևույթ: Դրանք ունեն սոցիո-մշակութային երևույթների գրեթե բոլոր բաղադրատարրերը՝ փոխառնչություններ սուբյեկտ հանդիսացող մտածող և գործող մարդիկ, նրանց արժեքները, նշանակությունները, նորմերը, որոնց շնորհիվ անհատներն առնչվում են իրար հետ՝ գիտակցելով դրանք և փոխանակվելով դրանցով, իրականացնելով բաց գործողություններ և նյութական արտեֆակտներ՝ որպես շարժիչներ կամ միջնորդներ, որոնց օգնությամբ նյութականանում և սոցիալականանում են ոչ նյութական արժեքները[150]:

---

148 Տե՛ս А. Оппенхейм, նշվ. աշխ., էջ 100:

149 Նախաքաղաքների հիմնական գործառույթների մասին տե՛ս В. М. Массон. Типология древних городов и исторический процесс. с. 6, Շենգավիթյան մշակույթի բնակավայրերի գործառույթների մասին տե՛ս Հ. Սիմոնյան, Ա. Գնունի, Սոցիալ-քաղաքական իրավիճակը....

150 Տե՛ս П. Сорокин, նշվ աշխ., էջ 193:

Summary

ABOUT THE PROBLEM OF THE CITY FORMATION IN ARMENIA

An Attempt of a socio-culturological analysis of the Early Bronze Urbanism

Artak V. Gnuni

In the IV-III Millenniums B.C. the Armenian Highland was included in the area of the Shengavit (Kuro-Arax) archaeological culture which occupied about 1.5 ml. sq. km. It spread from the Northern Caucasus to Syria and Palestine, from the North-West Iran to the Tauros Mountains. It was characterized by some similarities in handcraft, architecture, beliefs. These factors led to the activation of the relations between the communities, and, as a result, to the formation of a common historical-cultural area. This created favourable conditions for the social development of the society, and, eventually, for the decay of the Primitive Society.

Urbanism was one of the most important socio-cultural phenomena on the stage of the decay of the Primitive Society.

In the Early Bronze Age the process of urbanism was proceeding very actively in the Armenian Highland, including the whole region of the Shengavit cultural area.

Some settlements of the Shengavit culture had almost all signs of the early cities; therefore, they had the principal functions of the early cities, being the agricultural, trade-handcraft, cultural-ideological, military-political centers.

ՎԷՄ հասարակական գիտություններ Բ (Ը) տարի, թիվ 4 (32) հոկտեմբեր-դեկտեմբեր 2010